



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

7 նոյեմբերի 2023 թվականի թիվ 470-Ա

#### «ԻԳԻԹ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Մրցակցության պաշտպանության հանձնաժողովը (այսուհետ նաև՝ **Հանձնաժողով**) 2023 թվականի նոյեմբերի 7-ի նիստում, քննարկելով «ԻԳԻԹ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ նաև՝ **Ընկերություն**) նկատմամբ պատասխանատվության միջոց կիրառելու մասին հարցը,

### Պ Ա Ր Զ Ե Ց

#### 1. Վարույթի ընթացքի հակիրճ նկարագրությունը.

Հանձնաժողովի 2023 թվականի մայիսի 30-ի «ԻԳԻԹ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից տնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտման վերաբերյալ վարույթ հարուցելու մասին» թիվ 255-Ա որոշմամբ (այսուհետ նաև՝ **թիվ 255-Ա որոշում**) հարուցվել է թիվ ՀԳ-02032/23 վարույթը (այսուհետ նաև՝ **Վարույթ**):

Ընկերությունը թիվ 255-Ա որոշումը ստացել է 2023 թվականի հունիսի 1-ին և 2023 թվականի հունիսի 2-ին ներկայացրել է դիրքորոշում (այսուհետ նաև՝ **Դիրքորոշում 1**):

Հանձնաժողովի 2023 թվականի հուլիսի 10-ի «ՀԳ-02032/23 և թիվ ՀԳ-02033/23 վարույթների շրջանակներում զննում իրականացնելու մասին» թիվ 315-Ա որոշմամբ (այսուհետ նաև՝ **թիվ 315-Ա որոշում**) իրականացվել է զննում:

Հանձնաժողովի 2023 թվականի օգոստոսի 15-ի ««ԻԳԻԹ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության վերաբերյալ թիվ ՀԳ-02032/23 վարույթի շրջանակում փորձաքննություն նշանակելու և թիվ ՀԳ-02032/23 վարույթի ժամկետը երկարաձգելու մասին» թիվ 365-Ա որոշմամբ (այսուհետ նաև՝ **թիվ 365-Ա որոշում**) նշանակվել է փորձաքննություն և երկարաձգվել է Վարույթի ժամկետը:

Հանձնաժողովի գլխավոր քարտուղարի 2023 թվականի հոկտեմբերի 11-ի թիվ 9010 գրությամբ Ընկերությանն առաջարկվել է ներկայացնել Հանձնաժողովի անբարեխիղճ մրցակցության վերահսկողության վարչության (այսուհետ նաև՝ **Վարչություն**) կողմից կազմված ««Իգիթ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության վերաբերյալ թիվ ՀԳ-02032/23 վարույթում առկա փաստական հանգամանքների մասին» տեղեկանքի (այսուհետ նաև՝ **Տեղեկանք**) առնչությամբ գրավոր դիրքորոշում, որն Ընկերությունը ներկայացրել է 2023 թվականի հոկտեմբերի 27-ին (այսուհետ նաև՝ **Դիրքորոշում 2**):

Հանձնաժողովի գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարողի 2023 թվականի նոյեմբերի 1-ի թիվ 9725 գրությանը (այսուհետ նաև՝ **թիվ 9725 գրություն**) կից Ընկերությանն են ուղարկվել Վարչության 2023 թվականի նոյեմբերի 1-ի թիվ 9721 զեկուցագրի (այսուհետ նաև՝ **թիվ 9721 զեկուցագիր**) և դրան կից նյութերի պատճենները, որոնց առնչությամբ դիրքորոշում ունենալու դեպքում Ընկերությանն առաջարկվել է այն ներկայացնել մինչև 2023 թվականի նոյեմբերի 6-ը ներառյալ, որն Ընկերությունը ներկայացրել է 2023 թվականի նոյեմբերի 6-ին (այսուհետ նաև՝ **Դիրքորոշում 3**):

## **2. Վարույթի հարուցման առիթի և հիմքի հակիրճ նկարագրությունը.**

Վարչությունը 2023 թվականի մայիսի 26-ի թիվ 4628 զեկուցագրով առաջարկել է Ընկերության կողմից տնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտման հատկանիշների առկայությունը պարզելու նպատակով հարուցել վարույթ՝ հայտնելով, որ Ընկերության կողմից Հանձնաժողով է ներկայացվել ոչ հավաստի տեղեկատվություն: Մասնավորապես Ընկերությունը Հանձնաժողովին հայտնել է, որ իր կողմից արտադրված «Լոռի Excluzive» անվանումով ապրանքը «Կաթ պարունակող կաթնայուղի փոխարինիչով մթերք պատրաստված պանրի տեխնոլոգիայով Չանախ» անվանումով ապրանք է, մինչդեռ մի շարք փաստական հանգամանքներից պարզվել է, որ այն իրացրել է որպես «Լոռի» անվանումով պանիր:

Վարույթը հարուցվել է Ընկերության վարքագծում ոչ հավաստի տեղեկատվություն ներկայացնելու դրսևորմամբ Հանձնաժողովին տեղեկատվություն տրամադրելու հարցում տնտեսավարող սուբյեկտի պարտականության խախտման հատկանիշների առերևույթ առկայության հիմքով:

## **3. Ընկերության դիրքորոշումը.**

Դիրքորոշում 1-ով Ընկերությունը հայտնել է, որ.

1. Ընկերության կողմից արտադրվում են տարբեր տեսակի պանիրներ և կաթ պարունակող կաթնային յուղի փոխարինիչով մթերքներ, այդ թվում՝ «ԿՊՄ Գյումրի», «Շիրակ», «Չանախ», «Կումայրի», «Ազատան»: Անհատ ձեռնարկատեր Ավետիք Հակոբյանն (այսուհետ նաև՝ **ԱԶ Ա. Հակոբյան**), այցելելով գործարան, ծանոթանալով Ընկերության կողմից արտադրվող ապրանքատեսականու հետ, պատվիրել է «Կաթ պարունակող մթերք պատրաստված Չանախ պանրի տեխնոլոգիայով» ապրանքը, որը պետք է փաթեթավորվեր իր իսկ կողմից տրամադրված փաթեթների մեջ: Ընկերությունը

փաթեթավորման պատվերը կատարելուց հետո, մատակարարել է ապրանքը հաշիվ ապրանքագրերով՝ պատվիրատուին նախապես տրամադրելով ապրանքի վրա փակցվող պիտակի մակնշման օրինակը, որը ԱԶ Ա. Հակոբյանը պետք է օգտագործեր իր ընկերության պիտակի վրա ու համապատասխանեցնել Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2013 թվականի հոկտեմբերի 9-ի թիվ 67 որոշմամբ ընդունված «Կաթի և կաթնամթերքի անվտանգության մասին» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի (ՄՄ ՏԿ 033/2013) (այսուհետ նաև՝ **Կանոնակարգ**) պահանջներին, իսկ ԱԶ Ա. Հակոբյանը հավաստիացրել է, որ իր կողմից փակցվող պիտակը համապատասխանեցվել է Կանոնակարգի պահանջներին:

2. ԱԶ Ա. Հակոբյանը Ընկերությունից գնել է նաև «Լոռի» պանիր, որը մատակարարելուց առաջ արտադրվել, փաթեթավորվել, պիտակավորվել է Ընկերության կողմից:

3. ԱԶ Ա. Հակոբյանի կողմից ապրանքները գնելուց հետո Ընկերությունը պարտավորություն չի կրում հետևելու մատակարարված ապրանքի վերավաճառքին, դա գործնականում հնարավոր էլ չէ իրականացնել, քանի որ Ընկերությունը բացի նշված գործընկերոջից ունի նաև բազմաթիվ այլ գործընկերներ:

4. ԱԶ Ա. Հակոբյանն Ընկերությունից բացի աշխատում է նաև այլ պանիր արտադրող ընկերությունների հետ:

Ընկերությունը ներկայացրել է նաև ԱԶ Ա. Հակոբյանին մատակարարված ապրանքի հաշիվ ապրանքագրերը:

Դիրքորոշում 2-ով Ընկերությունը հայտնել է, որ:

1) Հանձնաժողովի նախագահի 2023 թվականի ապրիլի 28-ի թիվ 3630 գրությանն (այսուհետ նաև՝ **Գրություն**) ի պատասխան ներկայացված տեղեկատվությամբ Ընկերությունը նշել է, որ Գրությամբ նշված 2022 թվականի նոյեմբերի 9-ին արտադրված «Շիրակ» ապրանքային նշանով, «Լոռի Excluzive» անվանումով, 50% յուղայնությամբ ապրանքն (այսուհետ նաև՝ **Ապրանք**) իր կողմից փաթեթավորվել է ԱԶ Ա. Հակոբյանի պատվերով արտադրված «Կաթ պարունակող կաթնայուղի փոխարինիչով մթերք պատրաստված պանրի տեխնոլոգիայով Չանախ» ապրանքը:

2) Գրությանն ի պատասխան ներկայացված տեղեկատվությունը չի կարող հիմք հանդիսանալ կարծելու, որ Ապրանքը հանդիսանում է «Կաթ պարունակող կաթնայուղի փոխարինիչով մթերք պատրաստված պանրի տեխնոլոգիայով Չանախ» անվանումով ապրանք: Գրությանը կից լուսանկարում չի երևում Ապրանքի անվանումը, բացի այդ Ընկերությանը չի ուղարկվել հսկիչ գնման արդյունքում ձեռք բերված Ապրանքի լուսանկարը:

3) թիվ 315-Ա որոշման հիման վրա իրականացված զննման արդյունքում է իրեն հայտնի դարձել հսկիչ գնման արդյունքում ձեռքբերված Ապրանքի փաթեթվածքի վրա պիտակի և դրոշմապիտակի առկայության մասին:

4) թիվ 315-Ա որոշման հիման վրա իրականացված զննման առնչությամբ Ընկերությունը գտնում է, որ Ապրանքի փաթեթվածքի վրա առկա է նաև պիտակ հետևյալ մակնշումը. ««Շիրակ», «Լոռի Excluzive», «09 NOV 2022», «պատրաստված է անարատ կաթից», «յուղայնությունը 50%», Բաղադրությունը՝ կովի անարատ

պաստերիզացված կաթ 100%, կերակրի աղ, կալցիումի քլորիդ, բնական ներկանյութ աննատո (E160b), բակտերիալ կուլտուրա, շրդանաֆերմենտ, էներգետիկ արժեքը 100գ. ում՝ 331կկալ/1385կՋ, Սննդային արժեքը 100 գ.-ում՝ ճարպեր 28գ., սպիտակուցներ 22գ., աղ 3.5-4.5գ.: Պահպանման ժամկետը +20C +50C ջերմաստիճանում 6 ամիս, Արտադրող «Ոսկե Սեր» ՍՊԸ, ՀՀ, Շիրակի մարզ, գ. Աշոցք: Հեռ. 091-49-63-33».

5) թիվ 315-Ա որոշման հիման վրա իրականացված զննումից հետո, Վարչության անդամների հետ գրույցի արդյունքում Ընկերության ներկայացուցչի կողմից պարզաբանվել է՝ ԱՁ Ա. Հակոբյանի պատվերով Ընկերության կողմից արտադրված «Կաթ պարունակող կաթնայուղի փոխարինիչով մթերք պատրաստված պանրի տեխնոլոգիայով Չանախ» ապրանքը փաթեթավորվել է ԱՁ Ա. Հակոբյանի կողմից տրամադրված փաթեթներով, որոնք պիտակավորվել են Ընկերությանը պատկանող, տվյալ ապրանքը բնորոշող ամբողջական տեղեկատվություն պարունակող պիտակներով (կից ներկայացվել է պիտակ).

6) ԱՁ Ա. Հակոբյանը ցանկություն էր հայտնել շուկայում մյուսներից տարբերվելու նպատակով՝ մանրաձախ շուկայում իրացման ժամանակ Ընկերության պիտակները փոխարինվեն ԱՁ Ա. Հակոբյանին պատկանող պիտակներով.

7) ԱՁ Ա. Հակոբյանի հայտարարության համաձայն՝ Գրությանը կից լուսանկարում պատկերված ապրանքը ձեռք է բերվել 2022 թվականի նոյեմբերի 22-ին էլեկտրոնային եղանակով դուրս գրված թիվ Ա2740687723 հարկային հաշվով.

8) նմանատիպ փաթեթներով 2022 թվականի նոյեմբերին պանրային արտադրանք «Չանախ 50% յուղ.» ապրանքը փաթեթավորվել է Ընկերության փաթեթներով, իսկ ԱՁ Ա. Հակոբյանի պատվերով սկսել է փաթեթավորել դեկտեմբեր ամսից, հնարավոր է, որ այն իրացվել է ԱՁ Ա. Հակոբյանին 2022 թվականի դեկտեմբերի 14-ի թիվ Ա3428963718 հարկային հաշվով (կից ներկայացվել է), համաձայն որի՝ ԱՁ Ա. Հակոբյանը Ընկերությունից ձեռք է բերել 100 կգ. «Չանախ 50% յուղ.» անվանումով պանրային արտադրանք և 2300 կգ. պանիր «Լոռի 50 % յուղ.» անվանումով ապրանք: Հարկային հաշվում նշված անվանումներով ապրանքների իրացման փաստը ԱՁ Ա. Հակոբյանի կողմից հաստատվել էլեկտրոնային ստորագրությամբ, այսինքն տվյալ պահից ապրանքի սեփականության իրավունքը, ինչպես նաև հետագա ռիսկերը փոխանցվել է ԱՁ Ա. Հակոբյանին (համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 528-րդ հոդվածի՝ գնորդը պարտավոր է կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքների ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները).

9) Ընկերությունը տեղեկացրել է, որ պանրային արտադրանքի դեպքում հարկային հաշվի հետ գնորդ կազմակերպություններին, այդ թվում նաև՝ ԱՁ Ա. Հակոբյանին, տրամադրվել է ՊԵԿ գրությունը, համաձայն որի՝ «կաթ պարունակող կաթնային փոխարինիչով մթերք պատրաստված պանրի տեխնոլոգիայով» ապրանքները դասակարգվում են ԱՏԳ ԱԱ 2106 ապրանքային դիրքում և ենթակա չեն դրոշմապիտակով դրոշմավորման.

10) Տեղեկանքի համաձայն՝ ԱՁ Ա. Հակոբյանը Հանձնաժողովին հայտնել է, որ Ընկերությունից ձեռք բերելով «Չանախ 50% յուղ.» անվանումով պանրային արտադրանքը, սխալմամբ տվյալ ապրանքի վրա փակցրել է «Լոռի Excluzive»



անվանումով պիտակ և մատակարարել «Պար-Արտ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը (այսուհետ նաև՝ «**Պար-Արտ**» **ընկերություն**): Այն, որ ԱԶ Ա. Հակոբյանի իրացված ապրանքը եղել է «պանրային արտադրանք «Չանախ 50% յուղ» պնդել և հաստատել է նաև ԱԶ Ա. Հակոբյանը.

11) թիվ 315-Ա որոշման հիման վրա իրականացված զննումից հետո Ընկերության ներկայացուցչի ներկայությամբ ունեցած քննարկումների ժամանակ ԱԶ Ա. Հակոբյանը հայտարարել է, որ Ընկերությունից ձեռք բերվածը «պանրային արտադրանք «Չանախ 50% յուղ» ապրանք է, որի վրա սխալմամբ փակցրել է «Լոռի Excluzive» մակնշումով պիտակը, իսկ դրոշմապիտակը փաթեթվածքի վրա փակցրել է իր աշխատակիցը, ով տեղյակ չի եղել, որ այն ենթակա չէ դրոշմապիտակով դրոշմավորման, ուստի չի հրաժարվում կրել ներկայացված խախտման ամբողջ պատասխանատվությունը.

12) Ընկերությանը հայտնի է այն, որ ԱԶ Ա. Հակոբյանի նկատմամբ կատարված իրավախախտման համար, կիրառվել է պատասխանատվության միջոց: Համաձայն չլինելով Հանձնաժողովի՝ «ապրանքի փաթեթվածքի մակնշվածքում առկա դրոշմապիտակի համաձայն՝ Ապրանքն արտադրվել է Ընկերության կողմից որպես «Լոռի» պանիր» ձևակերպման հետ, Ընկերությունը տեղեկացնում է, որ պիտակը և դրոշմապիտակը տարբեր նպատակների են ծառայում, ուստի ապրանքի փաթեթվածքին են փակցվում առանձին-առանձին: Բնականաբար, ԱԶ Ա. Հակոբյանի կողմից սխալմամբ փակցված «Լոռի Excluzive» անվանումով պիտակի վրա, առաջնահերթության տեսակետից (այսինքն փակցվել է պիտակը, որից հետո դրա վրա փակցվել է դրոշմապիտակը) չէր կարող հայտնվել Ընկերության կողմից փակցված դրոշմապիտակը.

13) թիվ 315-Ա որոշման հիման վրա իրականացված զննումից հետո Հանձնաժողովի պատասխանտու ստորաբաժանման անդամների հետ տեղի ունեցած քննարկումների ժամանակ Ընկերության ներկայացուցչի կողմից պարզաբանվել է այն հնարավոր տարբերակները, որոնց առկայության պայմաններում հնարավոր է ԱԶ Ա. Հակոբյանի մոտ հայտնվեին Ընկերության «Լոռի» տեսակի պանրի համար նախատեսված դրոշմապիտակները՝ 2022 թվականի դեկտեմբերի 14-ին էլեկտրոնային եղանակով դուրս գրված թիվ Ա3428963718 հարկային հաշվով ԱԶ Ա. Հակոբյանին իրացվել էր նաև 2300 կգ. պանիր «Լոռի 50% յուղ.», որի վրա Ընկերության կողմից փակցվել է դրոշմապիտակները.

14) տարիներ շարունակ գնորդ կազմակերպություններից ստացել են բողոքներ, որ դրոշմապիտակները, որոնք ինքնակաշուն են, ապրանքների տեղափոխման և պահեստավորման ընթացքում պոկվում են ապրանքների վրայից.

15) Ընկերությունը ենթադրում է, որ հնարավոր է «Լոռի» պանրի փաթեթի վրայից պոկված դրոշմապիտակը ԱԶ Ա. Հակոբյանի աշխատակիցը, ըստ ԱԶ Ա. Հակոբյանի հայտարարության, սխալմամբ փակցրած լինի «Ոսկե Սեր» ընկերության պիտակի վրա: Չի բացառվում նաև, որ այն լինի Ընկերության կողմից դրոշմավորված «Լոռի» պանրի փաթեթների վրայից միտումնավոր պոկված դրոշմապիտակ.

16) թիվ 4392 գրությանն ի պատասխան ներկայացված տեղեկատվության վերաբերյալ Ընկերությունը եկել է այն համոզման, որ Հանձնաժողովին հետաքրքրում է

«Լոռի» և «Չանախ» ապրանքատեսակների փաթեթվածքները և պիտակները: Միևնույն ժամանակ Հանձնաժողովին է ուղարկվել նաև տվյալ պահին Ընկերությունում առկա փաթեթվածքները և պիտակները: Թիվ 4392 գրությամբ տվյալ պահին Ընկերությունից չի պահանջվել արտադրվող ապրանքների կոնկրետ ցանկ, որը հնարավորություն կտար անվանացանկով ներկայացված ապրանքների վերաբերյալ տալ համապատասխան մեկնաբանություն, օրինակ՝ պանիր «Ազատան 47% յուղ» 2022 թվականի ողջ տարվա ընթացքում արտադրվել է 1035 կգ., որի արտադրությունը 2023 թվականի հունվարի 1-ից Ընկերությունում դադարեցված է, պանրային արտադրանք «Դուստր Սիլվա 50% յուղ» 2022 թվականի ողջ տարվա ընթացքում արտադրվել է 513 կգ.՝ կոնկրետ գնորդների պահանջով, սահմանափակ քանակությամբ, ուստի նրանց պիտակները և փաթեթավորումները պատվիրվել է պահանջարկի քանակությամբ: Կան ապրանքատեսակներ, որոնց արտադրությունը ժամանակավորապես դադարեցվել են, բնականաբար նշված ապրանքների փաթեթները և պիտակները տվյալ պահին Ընկերության պահեստում առկա չեն:

Դիրքորոշում 3-ով Ընկերությունը վերահաստատել է Դիրքորոշում 2-ով իր արտահայտած կարծիքը:

#### **4. Հանձնաժողովի կողմից պահանջված և ստացված փաստաթղթերը և այլ տեղեկատվությունը.**

1. Հանձնաժողովի նախագահի 2022 թվականի դեկտեմբերի 16-ի «Հսկիչ գնում իրականացնելու մասին» թիվ 278-Ա հրամանի հիման վրա 2022 թվականի դեկտեմբերի 19-ին «Պար-Արտ» ընկերությունում իրականացվել է հսկիչ գնում (այսուհետ նաև՝ **Հսկիչ գնում**), որի արդյունքում կազմվել է «Հսկիչ գնման արդյունքների վերաբերյալ» թիվ 278 արձանագրությունը:

Հսկիչ գնման արդյունքում, ի թիվս այլնի, ձեռք է բերվել «Ոսկե Սեր» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ նաև՝ **«Ոսկե Սեր» ընկերություն**) կողմից 2022 թվականի նոյեմբերի 9-ին արտադրված «Շիրակ» ապրանքային նշանով, «Լոռի Excluzive» անվանումով, 50% յուղայնությամբ ապրանքը, որի փաթեթվածքի վրա առկա է հետևյալ մակնշումը. ««Շիրակ», «Լոռի Excluzive», «09 NOV 2022», «պատրաստված է անարատ կաթից», «յուղայնությունը 50%», Բաղադրությունը՝ կովի անարատ պաստերիզացված կաթ 100%, կերակրի աղ, կալցիումի քլորիդ, բնական ներկանյութ աննատո (E160b), բակտերիալ կուլտուրա, շրդանաֆերմենտ, էներգետիկ արժեքը 100գ. ում՝ 331կկալ/1385կՋ, Սննդային արժեքը 100 գ.-ում՝ ճարպեր 28գ., սպիտակուցներ 22գ., աղ 3.5-4.5գ.: Պահպանման ժամկետը +20C +50C ջերմաստիճանում 6 ամիս, Արտադրող «Ոսկե Սեր» ՍՊԸ, ՀՀ, Շիրակի մարզ, գ. Աշոցք: Հեռ. 091-49-63-33»:

2. Հանձնաժողովի գլխավոր քարտուղարի 2022 թվականի դեկտեմբերի 20-ի «Փորձաքննություն իրականացնելու մասին» թիվ 309-Ա հրամանի հիման վրա, ի թիվս այլ ապրանքների, Ապրանքն ուղարկվել է «Հանրապետական անասնաբուժասանիտարական և բուսասանիտարական լաբորատոր ծառայությունների կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը (այսուհետ նաև՝ **ՊՈԱԿ**)

լաբորատոր փորձաքննության՝ Ապրանքում բուսական յուղի առկայությունը և յուղայնության չափը պարզելու նպատակով:

ՊՈԱԿ-ը 2023 թվականի հունվարի 13-ին Հանձնաժողով է ներկայացրել 2023 թվականի հունվարի 13-ի թիվ 2148 փորձարկման արձանագրությունը, որի համաձայն՝ Ապրանքը պարունակում է բուսական յուղ և Կանոնակարգի իմաստով չի հանդիսանում «պանիր»:

3. Հանձնաժողովի նախագահի 2023 թվականի փետրվարի 28-ի թիվ 1785 գրությամբ «Պար-Արտ» ընկերությունից պահանջվել է Հանձնաժողով ներկայացնել Ապրանքի ձեռքբերումը հիմնավորող փաստաթղթերի պատճենները:

«Պար-Արտ» ընկերությունը 2023 թվականի մարտի 6-ին ներկայացրել է պահանջված տեղեկատվությունը, որի համաձայն՝ ԱԶ Ա. Հակոբյանը 2022 թվականի նոյեմբերի 15-ին (հարկային հաշիվ՝ թիվ Ա6034568749), 2022 թվականի դեկտեմբերի 6-ին (հարկային հաշիվ՝ թիվ Ա7010701438) և (հարկային հաշիվ՝ թիվ Ա9379965544) 2022 թվականի դեկտեմբերի 15-ին (հարկային հաշիվ՝ թիվ Ա1569034218) «Պար-Արտ» ընկերությանը մատակարարել է ընդհանուր 321.2 կիլոգրամ «Լոռի Էքսկլյուզիվ» անվանումով պանիր:

4. Հանձնաժողովի նախագահի 2023 թվականի մարտի 13-ի թիվ 1850 գրությամբ ԱԶ Ա. Հակոբյանից պահանջվել է Հանձնաժողով ներկայացնել հետևյալ տեղեկատվությունը.

1) ԱԶ Ա. Հակոբյանի կողմից ե՞րբվանից է «Պար-Արտ» ընկերությանը իրացվում Ապրանքը, այլ տնտեսավարող սուբյեկտներին Ապրանքն իրացվելու դեպքում՝ նշել դրանց անվանումները և յուրաքանչյուր մատակարարման սկզբնաժամկետները,

2) Ու՞մ կողմից է արտադրվում (անվանումը և ՀՎՀՀ-ն) և որտե՞ղ է արտադրվում (արտադրամասի հասցեն) Ապրանքը՝ կցելով հիմնավորող փաստաթղթերի պատճենները,

3) ԱԶ Ա. Հակոբյանի կողմից Ապրանքի ձեռքբերումը հիմնավորող փաստաթղթերի պատճենները,

4) «Ոսկե Սեր» ընկերության և ԱԶ Ա. Հակոբյանի միջև կնքված բոլոր փաստաթղթերի (պայմանագրեր, այդ թվում՝ աշխատանքային պայմանագրեր, դրանց փոփոխություններ, հաշիվ-ապրանքագրեր, հանձնման-ընդունման ակտեր և այլն) պատճենները:

ԱԶ Ա. Հակոբյանը 2023 թվականի մարտի 22-ին Հանձնաժողով է ներկայացրել գրություն, ի թիվս այլնի, հայտնելով, որ Ապրանքն արտադրվում է Ընկերության կողմից (իրավաբանական հասցե՝ ՀՀ, Շիրակի մարզ, գ. Ազատան, 54/6, ՀՎՀՀ 05801607):

ԱԶ Ա. Հակոբյանը որպես Ապրանքի ձեռքբերում ներկայացրել է 2022 թվականի նոյեմբերի 22-ի թիվ Ա2740687723 հարկային հաշիվը, որի համաձայն՝ ԱԶ Ա. Հակոբյանը Ընկերությունից ձեռք է բերել 150 կիլոգրամ «Չանախ 50% յուղ.» անվանումով պանրային արտադրանք և 1 700 կիլոգրամ «Պանիր «Լոռի» 50% յուղ.» անվանումով ապրանք:

Ըստ ԱԶ Ա. Հակոբյանի՝ ձեռքբերելով Ընկերությունից «Չանախ 50% յուղ.» անվանումով պանրային արտադրանքը սխալմամբ տվյալ ապրանքի վրա փակցրել է «Լոռի Excluzive» անվանումով պիտակը և մատակարարել «Պար-Արտ» ընկերությանը:

Հաշվի առնելով վերոգրյալը և այն հանգամանքը, որ սխալմամբ փակցված պիտակներով ապրանքները հնարավոր չէ նույնականացնել՝ ԱՁ Ա. Հակոբյանը նշել է, որ չի կարող տալ տեղեկատվություն առ այն, թե տվյալ ապրանքները որ տնտեսավարող սուբյեկտներին է մատակարարվել:

5. ԱՁ Ա. Հակոբյանի վերաբերյալ թիվ ՀԳ-01305/23 վարույթի շրջանակում Հանձնաժողովի նախագահի 2023 թվականի ապրիլի 28-ի թիվ 3629 գրությամբ ԱՁ Ա. Հակոբյանից պահանջվել է Հանձնաժողով ներկայացնել հետևյալ տեղեկատվությունը.

1) ԱՁ Ա. Հակոբյանի կողմից «Պար-Արտ» ընկերությանը մատակարարված Ապրանքը Ընկերությունից ձեռքբերած «Լոռի», թե՛ «Չանախ» անվանումով ապրանքն է.

2) արդյո՞ք ԱՁ Ա. Հակոբյանի կողմից «Պար-Արտ» ընկերությանը մատակարարված Ապրանքն ամբողջությամբ փաթեթավորվել է ԱՁ Ա. Հակոբյանի կողմից, թե միայն պիտակավորվել է:

ԱՁ Ա. Հակոբյանը 2023 թվականի մայիսի 3-ին Հանձնաժողով է ներկայացրել գրություն՝ հայտնելով, որ.

1) «Պար-Արտ» ընկերությանը մատակարարած Ապրանքը ԱՁ Ա. Հակոբյանի կողմից ձեռք է բերվել Ընկերությունից որպես «Չանախ» անվանումով ապրանք.

2) «Պար-Արտ» ընկերությանը մատակարարած Ապրանքը փաթեթավորվել է Ընկերության կողմից, իսկ պիտակավորվել ԱՁ Ա. Հակոբյանի կողմից:

6. Գրությամբ Ընկերությունից պահանջվել է Հանձնաժողով ներկայացնել հետևյալ տեղեկատվությունը.

1) արդյո՞ք Ապրանքն արտադրվել է Ընկերության կողմից.

2) եթե այո, ապա ի՞նչ ապրանքատեսակ է այն՝ նշելով ամբողջական անվանումը, և երբևե՞ր է այն արտադրվում:

Ընկերությունը 2023 թվականի ապրիլի 29-ին Հանձնաժողով ներկայացված գրությամբ հայտնել է, որ Գրությանը կից ներկայացված լուսանկարներում պատկերված է ԱՁ Ա. Հակոբյանի պատվերով Ընկերության կողմից փաթեթավորված ապրանքը:

Ընկերությունը հայտնել է նաև ապրանքատեսակի անվանումը՝ «Կաթ պարունակող կաթնայուղի փոխարինիչով մթերք պատրաստված պանրի տեխնոլոգիայով Չանախ», որը արտադրվում է Ընկերության կողմից 2021 թվականի ապրիլի 8-ից, իսկ ԱՁ Ա. Հակոբյանի պատվերով փաթեթավորված ապրանքատեսակը՝ 2022 թվականի դեկտեմբերից:

7. Հանձնաժողովի նախագահի 2023 թվականի մայիսի 23-ի թիվ 4392 գրությամբ (այսուհետ նաև՝ **թիվ 4392 գրություն**) Ընկերությունից պահանջվել է ներկայացնել 2022 թվականի հունվարի 1-ից մինչև 2023 թվականի մայիսի 22-ն ընկած ժամանակահատվածում Ընկերության կողմից արտադրված բոլոր պանիրների («Լոռի», «Չանախ» և այլն) և «Կաթ պարունակող մթերք պատրաստված կաթնայուղի փոխարինիչով արտադրված պանրի տեխնոլոգիայով» բոլոր ապրանքների փաթեթավածքները և պիտակները կամ դրանց լուսանկարները, իսկ նույն ժամանակահատվածում դրանց փոփոխված լինելու դեպքում նաև դրանք կամ դրանց լուսանկարները:

Ընկերությունը 2023 թվականի մայիսի 24-ին և մայիսի 25-ին Հանձնաժողով է ներկայացրել պանիրների և «Կաթ պարունակող կաթնայուղի փոխարինիչով պատրաստված պանրի տեխնոլոգիայով» մթերքների պիտակների և փաթեթվածքների լուսանկարները, որոնց համաձայն՝ 2022 թվականի հունվարի 1-ից մինչև 2023 թվականի մայիսի 22-ն ընկած ժամանակահատվածում Ընկերության կողմից արտադրվել է 47% յուղայնությամբ «Ազատան» անվանումով «Կաթ պարունակող կաթնայուղի փոխարինիչով մթերք պատրաստված պանրի տեխնոլոգիայով» ապրանք, 45% յուղայնությամբ «Շիրակ» անվանումով «Կաթ պարունակող կաթնայուղի փոխարինիչով մթերք պատրաստված պանրի տեխնոլոգիայով» ապրանք, 50% յուղայնությամբ «Կումայրի» անվանումով «Կաթ պարունակող կաթնայուղի փոխարինիչով մթերք պատրաստված պանրի տեխնոլոգիայով» ապրանք, 45% յուղայնությամբ «Գյումրի» անվանումով «Կաթ պարունակող կաթնայուղի փոխարինիչով մթերք պատրաստված պանրի տեխնոլոգիայով» ապրանք, 50% յուղայնությամբ «Չանախ» անվանումով «Կաթ պարունակող կաթնայուղի փոխարինիչով մթերք պատրաստված պանրի տեխնոլոգիայով» ապրանք, 50% յուղայնությամբ «Լոռի» պանիր, 50% յուղայնությամբ «Սուլուգունի» պանիր և 40% յուղայնությամբ «Չեչիլ» ապխտած պանիր:

Բացի այդ, Ընկերությունը ներկայացրել է պանիրների և «Կաթ պարունակող կաթնայուղի փոխարինիչով պատրաստված պանրի տեխնոլոգիայով» մթերքների թվով 8 տեսակի փաթեթվածք:

8. ԱՁ Ա. Հակոբյանը թիվ ՀԳ-01305/23 և թիվ ՀԳ-01789/23 վարույթների շրջանակներում 2023 թվականի մայիսի 25-ին տեղեկացրել է, որ Ապրանքը, որն արտադրվել և փաթեթավորվել է Ընկերության կողմից, ձեռք է բերել առանց մակնշման և պիտակի, որից հետո սխալմամբ Ապրանքի վրա փակցրել է ոչ թե ԱՁ Ա. Հակոբյանին պատկանող պիտակը, այլ «Ոսկե Սեր» ընկերությանը պատկանող պիտակը:

ԱՁ Ա. Հակոբյանը նշել է նաև, որ երկու պիտակներն իրարից տարբերվում են միայն արտադրողի մասին տվյալներով:

9. Հանձնաժողովի նախագահին ժամանակավոր փոխարինողի 2023 թվականի հունիսի 8-ի թիվ ԳԳ-474 գրությամբ (այսուհետ նաև՝ **թիվ ԳԳ-474 գրություն**) Հանձնաժողովը դիմել է ՊԵԿ՝ խնդրելով Հանձնաժողովին տրամադրել Ընկերության կողմից 2021 թվականի հունվարի 1-ից մինչև 2022 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ ընկած ժամանակահատվածում հաշվարկային փաստաթղթերի և ՀԴՄ կտրոնների միջոցով իրականացված բոլոր գործարքների վերաբերյալ տեղեկատվությունը:

ՊԵԿ-ը, ի պատասխան թիվ ԳԳ-474 գրության 2023 թվականի հունիսի 15-ին Հանձնաժողովին է տրամադրել հայցվող տեղեկատվությունը, որի համաձայն՝

10. Հանձնաժողովի նախագահի 2023 թվականի հունիսի 9-ի թիվ 5087 գրությամբ «Պար-Արտ» ընկերությունից պահանջվել է ներկայացնել հետևյալ տեղեկատվությունը.

1) Ապրանքը ԱԶ Ա. Հակոբյանի կողմից «Պար-Արտ» ընկերությանը մատակարարվել է որպես «Լոռի» անվանումով պանիր, թե՛ «Կաթ պարունակող կաթնայուղի փոխարինիչով մթերք պատրաստված պանրի տեխնոլոգիայիով Չանախ» անվանումով ապրանք.

2) արդյո՞ք ԱԶ Ա.Հակոբյանը 2022 թվականի ընթացքում «Պար-Արտ» ընկերությանը մատակարարել է «Կաթ պարունակող կաթնայուղի փոխարինիչով մթերք պատրաստված պանրի տեխնոլոգիայիով Չանախ» անվանումով ապրանք՝ մատակարարված լինելու դեպքում կցելով ձեռքբերումը հիմնավորող բոլոր փաստաթղթերի պատճենները:

«Պար-Արտ» ընկերությունը 2023 թվականի հունիսի 14-ին Հանձնաժողով ներկայացրած գրությամբ հայտնել է, որ ԱԶ Ա. Հակոբյանի կողմից 2022 թվականի ընթացքում «Պար-Արտ» ընկերությանը մատակարարված ապրանքների ցանկում «Լոռի» անվանումը պարունակող ապրանք, առկա է «պանիր Լոռի էքսկյուզիվ» անվանումով ապրանք (ըստ ձեռքբերման փաստաթղթերի տվյալների): Նշված ապրանքները հավանաբար որպես «Լոռի» պանիր մատակարարվել են «Պար-Արտ» ընկերությանը և ունեցել են այն փաթեթավորումը, որը պատկերված է Գրությանը կից ներկայացված լուսանկարներում:

«Պար-Արտ» ընկերությունը միաժամանակ տեղեկացրել է նաև, որ 2023 թվականի մարտ ամսվա վերջին ԱԶ Ա. Հակոբյանի կողմից «Պար-Արտ» ընկերությանը մատակարարվող ապրանքների կապակցությամբ դուրս գրված հաշիվ ապրանքագրերով որպես ապրանքի անվանում նշվել են տարբեր անվանումներ, ինչպիսիք են օրինակ՝ «Շիրակ Կալինինո», «Ֆետա», «Բարձրակարգ» և այլն, սակայն «Պանիր» բառը հաշիվ ապրանքագրերում չի նշվել:

«Պար-Արտ» ընկերությունը հայտնել է նաև, որ 2022 թվականի ընթացքում ԱԶ Ա. Հակոբյանի կողմից «Պար-Արտ» ընկերությանը «Կաթ պարունակող կաթնայուղի փոխարինիչով մթերք պատրաստված պանրի տեխնոլոգիայիով Չանախ» անվանումով

ապրանք մատակարարված լինելու կապակցությամբ ձեռքբերման փաստաթղթեր առկա չեն:

11. Թիվ 315-Ա որոշմամբ 2023 թվականի հուլիսի 14-ին ժամը 15:00-ին, Հանձնաժողովի գտնվելու վայրում, Ընկերության ներկայացուցիչ՝ գլխավոր հաշվապահ Ֆ. Հայրապետյանի և ԱԶ Ա. Հակոբյանի ներկայությամբ իրականացվել է զննում, որի արդյունքում կազմվել է «Զննման արդյունքների վերաբերյալ» թիվ 315 արձանագրությունը (այսուհետ նաև՝ **թիվ 315 արձանագրություն**):

Թիվ 315 արձանագրության համաձայն՝ Ապրանքի վրա առկա դրոշմապիտակի «Թաքս Սթամփ» ծրագրի միջոցով սկանավորմամբ իրականացված զննման արդյունքում պարզվել է, որ Ապրանքն արտադրվել է Ընկերության կողմից Շիրակի մարզ, գ. Ազատան 54/6 հասցեում, Ապրանքի անվանումն է «Պանիր Լոռի», յուղի զանգվածային մասը՝ 50%, պիտանիության ժամկետը՝ 6 ամիս:

12. Հանձնաժողովի գլխավոր քարտուղարի 2023 թվականի հուլիսի 21-ի թիվ 6616 գրությամբ Հանձնաժողովը դիմել է ՊՈԱԿ-ին՝ խնդրելով տրամադրել հետևյալ տեղեկատվությունը.

1) արդյո՞ք ՊՈԱԿ-ը ապրանքի նմուշի առկայության դեպքում կարող է որոշել այն հանդիսանում է «Լոռի», թե «Զանախ» տեսակի կաթնամթերք.

2) եթե այո, ապա որքա՞ն նմուշ է անհրաժեշտ դա որոշելու համար:

ՊՈԱԿ-ը 2023 թվականի հուլիսի 27-ին Հանձնաժողով ներկայացրած գրությամբ հայտնել է, որ ՊՈԱԿ-ի սննդամթերքի անվտանգության հետազոտությունների փորձարկման լաբորատորիան կարող է իրականացնել արտադրանքի նույնականացում՝ հիմք ընդունելով պանիր «Լոռի» և պանիր «Զանախ» ապրանքատեսակների համար հաստատված ազգային ստանդարտների (ՀՍ 378-2016 և ՀՍ 377-2016) նորմատիվ փաստաթղթերով ամրագրված ցուցանիշները և համապատասխանեցնելով ստանդարտով սահմանված պահանջներին որոշել տվյալ արտադրատեսակի համապատասխանությունը ապրանքատեսակի բնութագրին և անվանմանը:

ՊՈԱԿ-ը հայտնել է նաև, որ արտադրանքի նույնականացում իրականացնելու նպատակով ՊՈԱԿ-ին անհրաժեշտ է ներկայացնել յուրաքանչյուր հետազոտվող ապրանքատեսակից մեկական պանրագլուխ:

13. Թիվ 365-Ա որոշմամբ նշանակվել է փորձաքննություն՝ Ապրանքի տեսակը («Լոռի», «Զանախ» և այլն) և դրանում բուսական յուղի առկայության հարցը պարզելու նպատակով:

Ապրանքը փորձաքննություն ուղարկելուց առաջ՝ 2023 թվականի օգոստոսի 22-ին ժամը 12:45-ին և ՊՈԱԿ-ին հանձնելիս՝ 2023 թվականի օգոստոսի 22-ին ժամը 14:30-ին տեսանկարահանվել է, որից հետո Ընկերության ներկայացուցիչ Արամ Կոռյանի և ԱԶ Ա. Հակոբյանի ներկայությամբ Ապրանքը հանձնվել է ՊՈԱԿ-ին՝ կազմելով հանձնման-ընդունման ակտ:

ՊՈԱԿ-ը 2023 թվականի օգոստոսի 29-ին Հանձնաժողով է ներկայացրել 2023 թվականի օգոստոսի 28-ի թիվ 1411 փորձարկման արձանագրությունը (այսուհետ նաև՝ **թիվ 1411 փորձարկման արձանագրություն**):

Թիվ 1411 փորձարկման արձանագրության համաձայն՝ Ապրանքը ենթարկվել է ֆիզիկաքիմիական (յուղի զանգվածային մաս, խոնավության զանգվածային մաս, կերակրի աղի զանգվածային մաս), զգայորոշման և ճարպաթթվային կազմի նույնականացում (բուսական յուղի առկայության որոշում) ցուցանիշներով հետազոտման:

Ապրանքի ճարպաթթվային կազմի նույնականացմամբ (բուսական յուղի առկայության որոշում) պարզվել է, որ Ապրանքը պարունակում է բուսական յուղ:

Համաձայն Կանոնակարգի՝ «Պանիր» ապրանքատեսակը հանդիսանում է կաթնային կամ կաթնային բաղադրյալ մթերք, որի բաղադրության մեջ բուսական յուղերի առկայություն չի թույլատրվում:

Հիմք ընդունելով փորձարկման արդյունքները, Կանոնակարգի 5-րդ կետով հաստատված սահմանումները և 82-րդ կետը՝ ՊՈԱԿ-ը փաստել է, որ լաբորատոր փորձարկումների համար ներկայացված Ապրանքը հանդիսանում է կաթ պարունակող մթերք կաթնայուղի փոխարինիչով արտադրված պանրի տեխնոլոգիայով:

Լաբորատոր հետազոտության շրջանակներում Ապրանքի ձևի, չափի և զանգվածի ստուգման արդյունքում արձանագրվել է հետևյալը.

<b>Ապրանքի չափսերը, սմ.</b>	<b>Ապրանքի ձևը՝ քառակուսի հիմքերով չորսվակ</b>
Երկարությունը	29.0
Լայնությունը	13.5
Բարձրությունը	10.0
Զանգվածը, կգ	4.380

ՊՈԱԿ-ը ներկայացրել է նաև «Չանախ» և «Լոռի» պանիրների զգայորոշման և ֆիզիկաքիմիական ցուցանիշները՝ համաձայն հայկական ազգային ստանդարտների պահանջների (ՀՍ 378-2016 և ՀՍ 377-2016):

14. Հանձնաժողովի գլխավոր քարտուղարի 2023 թվականի սեպտեմբերի 4-ի թիվ 7915 գրությամբ «Պար-Արտ» ընկերությունից պահանջվել է հստակեցնել Հանձնաժողովի նախագահի թիվ 5087 գրության 1-ին կետով պահանջված տեղեկատվությանն ի պատասխան ներկայացված տեղեկատվությունն այն մասին, թե ԱԶ Ա. Հակոբյանի կողմից Ապրանքը որպես ինչ ապրանք է մատակարարվել «Պար-Արտ» ընկերությանը և իրացվել:

«Պար-Արտ» ընկերությունը 2023 թվականի սեպտեմբերի 12-ին Հանձնաժողով ներկայացված գրությամբ հայտնել է, որ ԱԶ Ա. Հակոբյանի կողմից «Պար-Արտ» ընկերությանն Ապրանքը մատակարարվել է որպես «Լոռի» տեսակի պանիր, ուստի դրանք իրացվել են համապատասխանաբար որպես «Լոռի» տեսակի պանիր:

15. Հանձնաժողովի գլխավոր քարտուղարի 2023 թվականի սեպտեմբերի 8-ի թիվ 8096 գրությամբ Հանձնաժողովը դիմել է «Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» փակ բաժնետիրական ընկերությանը (այսուհետ նաև՝ **Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին**)՝ խնդրելով տրամադրել



պանիր «Լոռի» և պանիր «Չանախ» ապրանքատեսակների համար հաստատված ազգային ստանդարտների նորմատիվ փաստաթղթերը՝ ՀՍ 378-2016 և ՀՍ 377-2016:

Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմինը 2023 թվականի հոկտեմբերի 5-ին էլեկտրոնային տարբերակով՝ <https://www.armstandard.am/> կայքի միջոցով, փաստաթղթի ճշգրտությունը հավաստող QR կոդի առկայությամբ Հանձնաժողովին է տրամադրել պահանջված փաստաթղթերը:

16. Վարչության 2023 թվականի սեպտեմբերի 11-ի թիվ 8134 զեկուցագրով թիվ ՀԳ-01305/23 վարույթի, թիվ ՀԳ-01789/23 վարույթի և թիվ ՀԳ-02031/22 վարույթի վերաբերելի նյութերի պատճենները կցվել են Վարույթի նյութերին:

17. Թիվ 9721 զեկուցագրով Հանձնաժողովի 2023 թվականի հունիսի 13-ի թիվ 274-Ա որոշմամբ (այսուհետ նաև՝ **թիվ 274-Ա որոշում**) հարուցված թիվ ՀԳ-02190/23 վարույթի (այսուհետ նաև՝ **թիվ ՀԳ-02190/23 վարույթ**) առնչությամբ Ընկերության դիրքորոշման, Հանձնաժողովի 2023 թվականի օգոստոսի 15-ի թիվ 363-Ա որոշման (այսուհետ նաև՝ **թիվ 363-Ա որոշում**), ՊՈԱԿ-ի 2023 թվականի օգոստոսի 28-ի թիվ 1410 փորձարկման արձանագրության (այսուհետ նաև՝ **թիվ 1410 փորձարկման արձանագրություն**), Հանձնաժողովի նախագահի 2023 թվականի հոկտեմբերի 13-ի և 20-ի համապատասխանաբար թիվ 9118 և թիվ 9357 գրությունների, Ընկերության 2023 թվականի հոկտեմբերի 20-ի և 26-ի գրությունների պատճենները կցվել են Վարույթի նյութերին:

18. ՊԵԿ տեղեկատվական տվյալների շտեմարանում առկա տեղեկատվության համաձայն՝ Ընկերության

## **5. Գործի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկման արդյունքում Հանձնաժողովը հաստատված է համարում հետևյալ փաստական հանգամանքները.**

1. Ընկերության կողմից տրամադրված տեղեկատվության համաձայն՝ 2022 թվականի հունվարի 1-ից մինչև 2023 թվականի մայիսի 22-ն ընկած ժամանակահատվածում Ընկերությունն արտադրել է 47% յուղայնությամբ «Ազատան» անվանումով «Կաթ պարունակող կաթնայուղի փոխարինիչով մթերք պատրաստված պանրի տեխնոլոգիայով» ապրանք, 45% յուղայնությամբ «Շիրակ» անվանումով «Կաթ պարունակող կաթնայուղի փոխարինիչով մթերք պատրաստված պանրի տեխնոլոգիայով» ապրանք, 50% յուղայնությամբ «Կումայրի» անվանումով «Կաթ պարունակող կաթնայուղի փոխարինիչով մթերք պատրաստված պանրի տեխնոլոգիայով» ապրանք, 45% յուղայնությամբ «Գյումրի» անվանումով «Կաթ պարունակող կաթնայուղի փոխարինիչով մթերք պատրաստված պանրի տեխնոլոգիայով» ապրանք, 50% յուղայնությամբ «Չանախ» անվանումով «Կաթ պարունակող կաթնայուղի փոխարինիչով մթերք պատրաստված պանրի տեխնոլոգիայով» ապրանք, 50% յուղայնությամբ «Լոռի» պանիր, 50% յուղայնությամբ «Սուլուգունի» պանիր և 40% յուղայնությամբ «Չեչիլ» ապխտած պանիր:

2.

3.

4. Ընկերության կողմից ներկայացված պանիրների և «Կաթ պարունակող կաթնայուղի փոխարինիչով պատրաստված պանրի տեխնոլոգիայով» մթերքների պիտակների ցանկում բացակայում է Ապրանքի,

պիտակները:

5. Ընկերության կողմից ներկայացված պանիրների և «Կաթ պարունակող կաթնայուղի փոխարինիչով պատրաստված պանրի տեխնոլոգիայով» մթերքների փաթեթվածքների ցանկում բացակայում է Ապրանքի փաթեթվածքը:

6. Ապրանքը պարունակում է բուսական յուղ և Կանոնակարգի իմաստով չի հանդիսանում «պանիր»:

7. Ապրանքն արտադրվել է Ընկերության կողմից:

8. Ապրանքը Ընկերության կողմից մատակարարվել է ԱԶ Ա. Հակոբյանին, որն այն «Պար-Արտ» ընկերությանն իրացվել է որպես «Լոռի» տեսակի պանիր:

9. Ընկերության կողմից տրամադրված տեղեկատվության համաձայն՝ Ապրանքը հանդիսանում է «Կաթ պարունակող կաթնայուղի փոխարինիչով մթերք պատրաստված պանրի տեխնոլոգիայով Չանախ» անվանումով ապրանք:

10. ԱԶ Ա. Հակոբյանի կողմից տրված գրավոր բացատրության համաձայն՝ Ապրանքը Ընկերությունից ձեռք է բերել առանց մակնշման և պիտակի:

11. Ըստ ԱԶ Ա. Հակոբյանի գրավոր բացատրության՝ ԱԶ Ա. Հակոբյանի կողմից «**Լոռի Excluzive**» անվանումով Ապրանքի վրա փակցված պիտակները տարբերվում է միայն արտադրողի տվյալներով:

12. Ապրանքի փաթեթվածքի վրա առկա դրոշմապիտակի համաձայն՝ Ապրանքն արտադրվել է Ընկերության կողմից որպես «Լոռի» պանիր:

13. Թիվ 1411 փորձարկման արձանագրության համաձայն՝ Ապրանքում առկա է բուսական յուղ և հանդիսանում է «Կաթ պարունակող մթերք կաթնայուղի փոխարինիչով արտադրված պանրի տեխնոլոգիայով» ապրանք:

Լաբորատոր հետազոտության շրջանակներում Ապրանքի ձևի, չափի և զանգվածի ստուգման արդյունքում արձանագրվել է հետևյալը.

Ապրանքի չափսերը, սմ	Ապրանքի ձևը՝ քառակուսի հիմքերով չորսվակ
Երկարությունը	29.0
Լայնությունը	13.5
Բարձրությունը	10.0
Զանգվածը, կգ	4.380

14. ՊՈԱԿ-ը ներկայացրել է «Չանախ» և «Լոռի» պանիրների զգայորոշման և ֆիզիկաքիմիական ցուցանիշները՝ համաձայն հայկական ազգային ստանդարտների պահանջների (ՀՍ 378-2016 և ՀՍ 377-2016):

15. Թիվ 1411 փորձարկման արձանագրության հիման վրա Պանիր «Լոռի» ապրանքատեսակի համար հաստատված ազգային ստանդարտի՝ ՀՍ 378-2016 նորմատիվ փաստաթղթերով ամրագրված ցուցանիշների համեմատության արդյունքում Ապրանքի լայնության և կերակրի աղի զանգվածային մասի վերաբերյալ ցուցանիշներն ավելի, իսկ երկարության, բարձրության, յուղի զանգվածային մասի, խոնավության զանգվածային մասի վերաբերյալ ցուցանիշներն համապատասխանում են պանիր «Լոռի» ապրանքատեսակի համար հաստատված ազգային ստանդարտի (ՀՍ 378-2016) նորմատիվ փաստաթղթերով ամրագրված ցուցանիշներին (տե՛ս ստորև ներկայացված Աղյուսակում):

Աղյուսակ				
	Լոռի	Չանախ	Փորձաքննության արդյունքներ	Համապատասխանություն
Երկարությունը	28.0-30.0	18.0-20.0	29.0	Համապատասխանում է Լոռիին
Լայնությունը	14.0-15.0	18.0-20.0	13.5	Առավել համապատասխանում է Լոռիին
Բարձրությունը	10.0-12.0	18.0-20.0 կամ 11.0-15.0	10.0	Համապատասխանում է Լոռիին
Յուղի զանգվածային մասը՝ վերահաշված ըստ չոր նյութի, % ոչ պակաս (ըստ յուղայնության)	45.0 % յուղայնության դեպքում՝ $45.0 \pm 1.6$ , 50.0 % յուղայնության դեպքում՝ $50.0 \pm 1.6$	40.0 % յուղայնության դեպքում՝ $40.0 \pm 1.6$ , 47.0 % յուղայնության դեպքում՝ $47.0 \pm 1.6$	48.8	Համապատասխանում է Լոռիին
Խոնավության զանգվածային մասը, % ոչ ավելի (ըստ յուղայնության)	44.0	40.0 % յուղայնության դեպքում՝ 52,0, 47.0 % յուղայնության դեպքում՝ 49,0	44.4	Համապատասխանում է Լոռիին
Կերակրի աղի զանգվածային մասը, %	3.5-4.5	4.0-7.0	3.8	Առավել համապատասխանում է Լոռիին

16. Ընկերությունը թիվ ՀԳ-02190/23 վարույթի առնչությամբ Հանձնաժողով ներկայացրած դիրքորոշմամբ, ի թիվս այլնի, հայտնել է, որ թիվ ՀԳ-02190/23 վարույթով նշված ապրանքը Ընկերության կողմից արտադրված «Կաթ պարունակող կաթնային յուղի փոխարինիչով մթերք պատրաստված Չանախ պանրի տեխնոլոգիայով» պատրաստված մթերք է:

17. Թիվ 363-Ա որոշմամբ նշանակվել է փորձաքննություն՝ թիվ ՀԳ-02190/23 վարույթով նշված ապրանքի տեսակը («Լոռի», «Չանախ» և այլն) և դրանում բուսական յուղի առկայության հարցը պարզելու նպատակով:

18. ՊՈԱԿ-ը 2023 թվականի օգոստոսի 29-ին Հանձնաժողով է ներկայացրել թիվ 1410 փորձարկման արձանագրությունը, որի համաձայն՝ թիվ 274-Ա որոշման մեջ նշված ապրանքը (այսուհետ նաև՝ **«Կալինինո» ապրանք**) ենթարկվել է ֆիզիկաքիմիական (յուղի զանգվածային մաս, խոնավության զանգվածային մաս, կերակրի աղի զանգվածային մաս), զգայորոշման և ճարպաթթվային կազմի նույնականացում (բուսական յուղի առկայության որոշում) ցուցանիշներով հետազոտման:

«Կալինինո» ապրանքի ճարպաթթվային կազմի նույնականացմամբ (բուսական յուղի առկայության որոշում) պարզվել է, որ Ապրանքը պարունակում է բուսական յուղ:

Համաձայն Կանոնակարգի՝ «Պանիր» ապրանքատեսակը հանդիսանում է կաթնային կամ կաթնային բաղադրյալ մթերք, որի բաղադրության մեջ բուսական յուղերի առկայություն չի թույլատրվում:

Հիմք ընդունելով փորձարկման արդյունքները, Կանոնակարգի 5-րդ կետով հաստատված սահմանումները և 82-րդ կետը՝ ՊՈԱԿ-ը փաստել է, որ լաբորատոր փորձարկումների համար ներկայացված «Կալինինո» ապրանքը հանդիսանում է կաթ պարունակող մթերք կաթնայուղի փոխարինիչով արտադրված պանրի տեխնոլոգիայով:

Լաբորատոր հետազոտության շրջանակներում «Կալինինո» ապրանքի ձևի, չափի և զանգվածի ստուգման արդյունքում արձանագրվել է հետևյալը.

<b>«Կալինինո» ապրանքի չափսերը, սմ</b>	<b>«Կալինինո» ապրանքի ձևը՝ քառակուսի հիմքերով չորսվակ</b>
Երկարությունը	28.0
Լայնությունը	13.0-14.0
Բարձրությունը	13.5
Չանգվածը, կգ	6.2

ՊՈԱԿ-ը ներկայացրել է նաև «Չանախ» և «Լոռի» պանիրների զգայորոշման և ֆիզիկաքիմիական ցուցանիշները՝ համաձայն հայկական ազգային ստանդարտների պահանջների (ՀՍ 378-2016 և ՀՍ 377-2016):

Թիվ 1410 փորձարկման արձանագրության հիման վրա Պանիր «Լոռի» ապրանքատեսակի համար հաստատված ազգային ստանդարտի՝ ՀՍ 378-2016 նորմատիվ փաստաթղթերով ամրագրված ցուցանիշների համեմատության արդյունքում «Կալինինո» ապրանքի լայնության և կերակրի աղի զանգվածային մասի վերաբերյալ ցուցանիշներն ավելի, իսկ երկարության, բարձրության, յուղի զանգվածային մասի, խոնավության զանգվածային մասի վերաբերյալ ցուցանիշներն համապատասխանում են պանիր «Լոռի» ապրանքատեսակի համար հաստատված ազգային ստանդարտի (ՀՍ 378-2016) նորմատիվ փաստաթղթերով ամրագրված ցուցանիշներին (տե՛ս ստորև ներկայացված Աղյուսակում):

Աղյուսակ			
	ՉԱՆԱԽ	ԼՈՌԻ	ՓՈՐՁԱՆՄՈՒՇ (50% յուղայնությամբ)
Երկարությունը	18.0-20.0	28.0-30.0	28.0
Լայնությունը	18.0-20.0	14.0-15.0	13.0-14.0
Արտաքին տեսքը	Առանց պանրակեղևի, արտաքին շերտն ավելի պինդ, մակերևույթը հարթ՝ ցանցակտավի կամ ձևակաղապարի հետքերով: Թույլատրվում է առանձին պանրագլուխներում աննշան ճաքերի առկայություն և ոչ մեծ ձևախախտում	Առանց պանրակեղևի չորսվակներ	Առանց պանրակեղևի չորսվակներ
Համը և հոտը	Պանրին բնորոշ համով և հոտով, սուր աղի: Թույլատրվում է թույլ արտահայտված կերահամ՝ աննշան դառնահամությամբ:	Մաքուր. հասունացած պանրին բնորոշ արտահայտված համով և հոտով, թեթևակի թթվային, չափավոր աղի, առանց կողմնակի համի և հոտի	Չափավոր աղի, առանց կողմնակի համի և հոտի
Պատկերը կտրվածքում	Շրջանաձև և անկյունաձև անցքերի առկայություն	Շրջանաձև և օվալաձև անցքերի առկայություն	Շրջանաձև և օվալաձև անցքերի առկայություն
Յուղի զանգվածային մասը՝ վերահաշված ըստ չոր նյութի, % ոչ պակաս (ըստ յուղայնության)	40.0% յուղայնության դեպքում՝ $40.0 \pm 1.6$ , 47.0% յուղայնության դեպքում՝ $47.0 \pm 1.6$	45.0% յուղայնության դեպքում՝ $45.0 \pm 1.6$ , 50.0% յուղայնության դեպքում՝ $50.0 \pm 1.6$	49.6%
Խոնավության զանգվածային	40.0% յուղայնության	44.0%	43.9%

մասը, % ոչ ավելի (ըստ յուղայնության)	դեպքում՝ 52.0, 47.0% յուղայնության դեպքում՝ 49.0		
Կերակրի աղի զանգվածային մասը, %	4.0%-7.0%	3.5%-4.5%	3.5%

19. Հանձնաժողովի նախագահի 2023 թվականի հոկտեմբերի 13-ի թիվ 9118 գրությամբ Ընկերությունից պահանջվել է Հանձնաժողով ներկայացնել տեղեկատվություն այն մասին, թե «Կալինինո» ապրանքը ո՞ր պանրի (Մոցարելա, Չեչիլ, Թել, Սուլուգունի և այլն) տեխնոլոգիայով պատրաստված կաթ պարունակող կաթնայուղի փոխարինիչով մթերք է՝ նշելով ամբողջական անվանումը:

Ընկերությունը 2023 թվականի հոկտեմբերի 20-ին Հանձնաժողով ներկայացված տեղեկատվությամբ հայտնել է, որ յուրաքանչյուր կազմակերպություն ինքն է որոշում իր կողմից արտադրվող կաթ պարունակող կաթնային յուղի փոխարինիչով մթերք պատրաստված պանրի տեխնոլոգիայով ապրանքի տեխնոլոգիան և Ընկերությունը ներկայացված տեխնոլոգիայով պատրաստված թիվ 274-Ա որոշման մեջ նշված ապրանքը անվանել է «Կալինինո»: Միաժամանակ Ընկերությունը չի նշել «Կալինինո» ապրանքի որևէ պանրի տեսակի տեխնոլոգիայով պատրաստված լինելու մասին:

20. Հանձնաժողովի նախագահի 2023 թվականի հոկտեմբերի 20-ի թիվ 9357 գրությամբ Ընկերությունից պահանջվել է Հանձնաժողով ներկայացնել տեղեկատվություն Ընկերության կողմից արտադրված կաթ պարունակող մթերք կաթնայուղի փոխարինիչով արտադրված պանրի տեխնոլոգիայով ապրանքների որևէ պանրի տեսակի (Մոցարելա, Լոռի, Չեչիլ, Չանախ, Թել, Սուլուգունի և այլն) տեխնոլոգիայով արտադրված լինելու կամ չլինելու վերաբերյալ՝ որևէ պանրի տեսակի տեխնոլոգիայով արտադրված լինելու դեպքում նշելով կոնկրետ պանրի տեսակը:

Ընկերությունը 2023 թվականի հոկտեմբերի 26-ին Հանձնաժողով ներկայացված տեղեկատվությամբ հայտնել է, որ Ընկերության կողմից արտադրվող Կաթ պարունակող կաթնային յուղի փոխարինիչով պատրաստված պանրի տեխնոլոգիայով մթերքները չունեն կոնկրետ պանրի տեխնոլոգիա: Արտադրվող ապրանքները կարող են տարբերվել օգտագործվող հումքի որակով, որը հետագայում ազդում է ապրանքի որակային, համային հատկանիշների վրա:

**6. Վարույթի փաստական հանգամանքների և վերաբերելի իրավական նորմերի ուսումնասիրության և վերլուծության արդյունքում Հանձնաժողովը եզրահանգում է հետևյալին.**

**1) Ընկերության կողմից իրավախախտում կատարված լինելու հարցի կապակցությամբ.**

Վարույթը հարուցված է Ընկերության կողմից ոչ հավաստի տեղեկատվություն ներկայացնելու դրսևորմամբ Հանձնաժողովին տեղեկատվություն տրամադրելու

հարցում տնտեսավարող սուբյեկտի պարտականության խախտման հատկանիշների առերևույթ առկայության հիմքով:

Ընկերությունն առարկել է՝ հայտնելով հետևյալը.

1. ԱՁ Ա. Հակոբյանն այցելելով գործարան, ծանոթանալով Ընկերության կողմից արտադրվող ապրանքատեսականու հետ, պատվիրել է «Կաթ պարունակող մթերք պատրաստված Չանախ պանրի տեխնոլոգիայով» ապրանքը, որը պետք է փաթեթավորվեր իր իսկ կողմից տրամադրված փաթեթների մեջ: Ընկերությունը փաթեթավորման պատվերը կատարելուց հետո, Ապրանքը մատակարարել է հաշիվ ապրանքագրերով՝ ԱՁ Ա. Հակոբյանին նախապես տրամադրելով Ապրանքի վրա փակցվող պիտակի մակնշման օրինակը, որը ԱՁ Ա. Հակոբյանը պետք է օգտագործեր իր ընկերության պիտակի վրա ու համապատասխանեցներ Կանոնակարգի պահանջներին, իսկ ԱՁ Ա. Հակոբյանը հավաստիացրել է, որ իր ընկերության կողմից փակցվող պիտակը համապատասխանեցվել է Կանոնակարգի պահանջներին:

2. ԱՁ Ա. Հակոբյանը Ընկերությունից գնել է նաև «Լոռի» պանիր, որը մատակարարելուց առաջ արտադրվել, փաթեթավորվել, պիտակավորվել է Ընկերության կողմից:

3. ԱՁ Ա. Հակոբյանի կողմից ապրանքները գնելուց հետո Ընկերությունը պարտավորություն չի կրում հետևելու մատակարարված ապրանքի վերավաճառքին, դա գործնականում հնարավոր էլ չէ իրականացնել, քանի որ Ընկերությունը բացի նշված գործընկերոջից ունի նաև բազմաթիվ այլ գործընկերներ:

4. ԱՁ Ա. Հակոբյանն Ընկերությունից բացի աշխատում է նաև այլ պանիր արտադրող ընկերությունների հետ:

5. Գրությանն ի պատասխան ներկայացված տեղեկատվությունը չի կարող հիմք հանդիսանալ կարծելու, որ Ապրանքը հանդիսանում է «Կաթ պարունակող կաթնայուղի փոխարինիչով մթերք պատրաստված պանրի տեխնոլոգիայով Չանախ» անվանումով ապրանք: Գրությանը կից լուսանկարում չի երևում Ապրանքի անվանումը, բացի այդ, Ընկերությանը չի ուղարկվել հսկիչ գնման արդյունքում ձեռք բերված Ապրանքի լուսանկարը:

6. Թիվ 315-Ա որոշման հիման վրա իրականացված զննման արդյունքում է Ընկերությանը հայտնի դարձել հսկիչ գնման արդյունքում ձեռքբերած Ապրանքի փաթեթվածքի վրա պիտակի և դրոշմապիտակի առկայության մասին: Թիվ 315-Ա որոշման հիման վրա իրականացված զննումից հետո, Վարչության անդամների հետ զրույցի արդյունքում Ընկերության ներկայացուցչի կողմից պարզաբանվել է՝ ԱՁ Ա. Հակոբյանի պատվերով Ընկերության կողմից արտադրված «Կաթ պարունակող կաթնայուղի փոխարինիչով մթերք պատրաստված պանրի տեխնոլոգիայով Չանախ» ապրանքը փաթեթավորվել է ԱՁ Ա. Հակոբյանի կողմից տրամադրված փաթեթներով, որոնք պիտակավորվել են Ընկերությանը պատկանող, տվյալ ապրանքը բնորոշող ամբողջական տեղեկատվություն պարունակող պիտակներով (կից ներկայացվել է պիտակ):



Ընկերությունը նշել է նաև, որ ԱՁ Ա. Հակոբյանը ցանկություն էր հայտնել շուկայում մյուսներից տարբերվելու նպատակով՝ մանրածախ շուկայում իրացման ժամանակ Ընկերության պիտակները փոխարինվեն ԱՁ Ա. Հակոբյանին պատկանող պիտակներով:

7. Նմանատիպ փաթեթներով 2022 թվականի նոյեմբերին պանրային արտադրանք «Չանախ 50% յուղ» ապրանքը փաթեթավորվել է Ընկերության փաթեթներով, իսկ ԱՁ Ա. Հակոբյանի պատվերով սկսել է փաթեթավորել դեկտեմբեր ամսից, հնարավոր է, որ այն իրացվել է ԱՁ Ա. Հակոբյանին 2022 թվականի դեկտեմբերի 14-ի թիվ Ա3428963718 հարկային հաշվով (կից ներկայացվել է), համաձայն որի՝ ԱՁ Ա. Հակոբյանը Ընկերությունից ձեռք է բերել 100 կգ. «Չանախ 50% յուղ» անվանումով պանրային արտադրանք և 2300 կգ. պանիր «Լոռի 50 % յուղ» անվանումով ապրանք: Հարկային հաշվում նշված անվանումներով ապրանքների իրացման փաստը ԱՁ Ա. Հակոբյանի կողմից հաստատվել էլեկտրոնային ստորագրությամբ, այսինքն տվյալ պահից ապրանքի սեփականության իրավունքը, ինչպես նաև հետագա ռիսկերը փոխանցվել է ԱՁ Ա. Հակոբյանին (համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 528-րդ հոդվածի՝ գնորդը պարտավոր է կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքների ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները):

8. Պանրային արտադրանքի դեպքում հարկային հաշվի հետ գնորդ կազմակերպություններին, այդ թվում նաև՝ ԱՁ Ա. Հակոբյանին, տրամադրվել է ՊԵԿ գրությունը, համաձայն որի՝ «կաթ պարունակող կաթնային փոխարինիչով մթերք պատրաստված պանրի տեխնոլոգիայով» ապրանքները դասակարգվում են ԱՏԳ ԱԱ 2106 ապրանքային դիրքում և ենթակա չեն դրոշմապիտակով դրոշմավորման: Համաձայն չլինելով Հանձնաժողովի՝ «ապրանքի փաթեթվածքի մակնշվածքում առկա դրոշմապիտակի համաձայն՝ Ապրանքն արտադրվել է Ընկերության կողմից որպես «Լոռի» պանիր» ձևակերպման հետ, Ընկերությունը տեղեկացրել է, որ պիտակը և դրոշմապիտակը տարբեր նպատակների են ծառայում, ուստի ապրանքի փաթեթվածքին են փակցվում առանձին-առանձին: Բնականաբար, ԱՁ Ա. Հակոբյանի կողմից սխալմամբ փակցված «Լոռի Excluzive» անվանումով պիտակի վրա, առաջնահերթության տեսակետից (այսինքն փակցվել է պիտակը, որից հետո դրա վրա փակցվել է դրոշմապիտակը) չէր կարող հայտնվել Ընկերության կողմից փակցված դրոշմապիտակը:

9. Թիվ 4392 գրությանն ի պատասխան ներկայացված տեղեկատվության վերաբերյալ Ընկերությունը եկել է այն համոզման, որ Հանձնաժողովին հետաքրքրում է «Լոռի» և «Չանախ» ապրանքատեսակների փաթեթվածքները և պիտակները: Միևնույն ժամանակ Հանձնաժողովին է ուղարկվել նաև տվյալ պահին Ընկերությունում առկա փաթեթվածքները և պիտակները: Թիվ 4392 գրությամբ տվյալ պահին Ընկերությունից չի պահանջվել արտադրվող ապրանքների կոնկրետ ցանկ, որը հնարավորություն կտար անվանացանկով ներկայացված ապրանքների վերաբերյալ տալ համապատասխան մեկնաբանություն, օրինակ՝ պանիր «Ազատան 47% յուղ» 2022 թվականի ողջ տարվա ընթացքում արտադրվել է 1035 կգ., որի արտադրությունը 2023 թվականի հունվարի 1-

ից Ընկերությունում դադարեցված է, պանրային արտադրանք «Դուստր Սիլվա 50% յուղ» 2022 թվականի ողջ տարվա ընթացքում արտադրվել է 513 կգ՝ կոնկրետ գնորդների պահանջով, սահմանափակ քանակությամբ, ուստի նրանց պիտակները և փաթեթավորումները պատվիրվել է պահանջարկի քանակությամբ: Կան ապրանքատեսակներ, որոնց արտադրությունը ժամանակավորապես դադարեցվել են, բնականաբար նշված ապրանքների փաթեթները և պիտակները տվյալ պահին Ընկերության պահեստում առկա չեն:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Հանձնաժողովը նախևառաջ, հարկ է համարում անդրադառնալ հետևյալ հարցադրումների պարզաբանմանը.

**1) Ո՞ր դեպքում է ծագում Հանձնաժողովին տեղեկատվություն տրամադրելու հարցում տնտեսավարող սուբյեկտի պարտականությունը:**

**2) Ինչպե՞ս է դրսևորվում Հանձնաժողովին տեղեկատվություն տրամադրելու հարցում տնտեսավարող սուբյեկտի պարտականության խախտման օբյեկտիվ կողմը:**

**3) Արդյո՞ք տնտեսավարող սուբյեկտը կարող է պատրաստի արտադրանքն առանց դրոշմապիտակով դրոշմավորման, ինչպես նաև դրոշմապիտակները փոխանցել կամ օտարել այլ անձի:**

**4) Տնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտման վերաբերյալ վարույթում ո՞վ է կրում վարույթով պատասխանողի համար բարենպաստ փաստական հանգամանքների ապացուցման պարտականությունը:**

**Առաջին հարցադրման կապակցությամբ.**

«Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ **Օրենք**) 43-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Հանձնաժողովի նախագահի գրության կամ Հանձնաժողովի որոշման կամ օրենսդրությամբ սահմանված պահանջի հիման վրա տնտեսավարող սուբյեկտները պարտավոր են սահմանված ժամկետում ներկայացնել Հանձնաժողովի՝ օրենքով նախատեսված լիազորությունների իրականացման համար անհրաժեշտ փաստաթղթեր, նյութեր և այլ տեղեկատվություն, բացառությամբ բանկային, ապահովագրական, կենսաթոշակային և բժշկական գաղտնիք պարունակող տեղեկությունների:

Օրենքի վկայակոչված իրավադրույթի բովանդակային վերլուծության արդյունքում պարզ է դառնում, որ.

1. Օրենքով Հանձնաժողովին վերապահվել է տնտեսավարող սուբյեկտներից ցանկացած տեղեկատվություն՝ բացառությամբ բանկային, ապահովագրական, կենսաթոշակային և բժշկական գաղտնիք պարունակող տեղեկությունների, պահանջելու լիազորություն,

2. տեղեկատվություն պահանջելու Հանձնաժողովի լիազորության իրականացման կամ տեղեկատվություն ներկայացնելու տնտեսավարող սուբյեկտի պարտականության կատարման նախադրյալը պահանջվող տեղեկատվության՝ Հանձնաժողովի լիազորությունների իրականացման համար անհրաժեշտ լինելն է,

3. Հանձնաժողովին տեղեկատվություն ներկայացնելու պարտականության ծագման հիմքերն են՝ Հանձնաժողովի նախագահի գրությունը, կամ Հանձնաժողովի որոշումը կամ անմիջականորեն օրենսդրությամբ սահմանված պահանջը:

Որպես Հանձնաժողովի կողմից տնտեսավարող սուբյեկտներին ներկայացվող տեղեկատվություն տրամադրելու պահանջի իրավաչափության պայման՝ նախատեսված է.

1) վարչական մարմնի մոտ տեղեկատվություն պահանջելու լիազորության ծագման և իրականացման նախադրյալի (պահանջվող տեղեկատվության անհրաժեշտությունը Հանձնաժողովի լիազորությունների իրականացման համար) առկայությունը,

2) Հանձնաժողովին տեղեկատվություն ներկայացնելու պարտականության ծագման հիմքերից (Հանձնաժողովի նախագահի գրություն կամ Հանձնաժողովի որոշում կամ օրենսդրությամբ սահմանված պահանջ) որևէ մեկի առկայությունը:

Նշվածի համատեքստում հարկ է շեշտել, որ Հանձնաժողովի լիազորությունների իրականացման համար պահանջվող տեղեկատվության անհրաժեշտությունն ուղղակիորեն պայմանավորված է այն լիազորության իրականացման հետ, որի կապակցությամբ պահանջվում է այն: Հետևաբար, յուրաքանչյուր դեպքում, երբ խոսքը վերաբերում է Հանձնաժողովի կողմից տեղեկատվություն պահանջելու հարցին և Հանձնաժողովի հարցման նպատակն է իր լիազորությունների պատշաճ իրականացումը, ապա տեղեկատվություն պահանջելու անհրաժեշտությունն արդեն իսկ հիմնավորված է օրենսդրական մակարդակով:

Միաժամանակ Օրենքի 43-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Հանձնաժողովի նախագահի գրությամբ կամ Հանձնաժողովի որոշմամբ անհրաժեշտ փաստաթղթեր, նյութեր և այլ տեղեկատվություն պահանջելիս Հանձնաժողովը տնտեսավարող սուբյեկտին տեղեկացնում է դրանք ներկայացնելու ժամկետի, ինչպես նաև սահմանված ժամկետում անհրաժեշտ փաստաթղթեր, նյութեր և այլ տեղեկատվություն չներկայացնելու կամ ոչ հավաստի կամ ոչ ամբողջական տեղեկատվություն ներկայացնելու իրավական հետևանքների մասին:

Վկայակոչված նորմի վերլուծության արդյունքում պարզ է դառնում, որ անհրաժեշտ փաստաթղթեր և այլ տեղեկատվություն պահանջելիս Հանձնաժողովի նախագահի գրությունը կամ Հանձնաժողովի որոշումը պետք է պարունակի՝

1. անհրաժեշտ փաստաթղթեր և այլ տեղեկատվություն ներկայացնելու ժամկետը,

2. սահմանված ժամկետում անհրաժեշտ փաստաթղթեր և այլ տեղեկատվություն չներկայացնելու կամ ոչ հավաստի կամ ոչ ամբողջական տեղեկատվություն ներկայացնելու իրավական հետևանքների մասին տեղեկություն:

Այսպիսով, Հանձնաժողովի կողմից տեղեկատվություն տրամադրելու վերոգրյալ պայմաններին համապատասխանող պահանջի դեպքում տնտեսավարող սուբյեկտի համար ծագում է Հանձնաժողովի կողմից պահանջված տեղեկատվությունը տրամադրելու պարտականությունը:

**Երկրորդ հարցադրման կապակցությամբ.**

Օրենքի 43-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Հանձնաժողովի նախագահի գրությամբ կամ Հանձնաժողովի որոշմամբ անհրաժեշտ փաստաթղթեր, նյութեր և այլ

տեղեկատվություն պահանջելիս Հանձնաժողովը տնտեսավարող սուբյեկտին տեղեկացնում է դրանք ներկայացնելու ժամկետի, ինչպես նաև սահմանված ժամկետում անհրաժեշտ փաստաթղթեր, նյութեր և այլ տեղեկատվություն չներկայացնելու կամ ոչ հավաստի կամ ոչ ամբողջական տեղեկատվություն ներկայացնելու իրավական հետևանքների մասին:

Օրենքի 43-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ տնտեսավարող սուբյեկտի հիմնավոր միջնորդության հիման վրա Հանձնաժողովի նախագահի գրությամբ կամ Հանձնաժողովի որոշմամբ սահմանված տեղեկատվության ներկայացման ժամկետը համապատասխանաբար կարող է Հանձնաժողովի նախագահի գրությամբ կամ Հանձնաժողովի որոշմամբ երկարաձգվել, և տեղեկատվությունը ենթակա է տրամադրման այդ ժամկետում:

Օրենքի 93-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ տնտեսավարող սուբյեկտի կողմից Հանձնաժողովի նախագահի գրությամբ կամ Հանձնաժողովի որոշմամբ կամ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր կամ այլ տեղեկատվություն սահմանված ժամկետում չներկայացվելու կամ ոչ հավաստի կամ ոչ ամբողջական տեղեկություններ ներկայացվելու համար նշանակվող տուգանքի չափը կազմում է մինչև հինգ միլիոն դրամ:

Օրենքի 93-րդ հոդվածի 9-րդ մասի համաձայն՝ վարույթով պատասխանող տնտեսավարող սուբյեկտի կողմից Հանձնաժողովի նախագահի գրությամբ կամ Հանձնաժողովի որոշմամբ կամ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր կամ այլ տեղեկատվություն սահմանված ժամկետում չներկայացվելու կամ ոչ հավաստի կամ ոչ ամբողջական տեղեկություններ ներկայացվելու համար նշանակվող տուգանքի չափը կազմում է մինչև վարույթով քննարկվող իրավախախտման համար սահմանված տուգանքի չափը, իսկ մի քանի խախտումների դեպքում՝ դրանց համար սահմանված առավել խիստ տուգանքի չափը:

Վերոնշյալ կարգավորումների հիման վրա Հանձնաժողովը հարկ է համարում, նախևառաջ, արձանագրել, որ Հանձնաժողովին տեղեկատվություն տրամադրելու հարցում տնտեսավարող սուբյեկտը պարտականությունն է Հանձնաժողովի նախագահի գրությամբ կամ Հանձնաժողովի որոշմամբ նշված ժամկետում և ծավալով ամբողջական և հավաստի տեղեկատվությունը ներկայացնելը: Ընդ որում, տնտեսավարող սուբյեկտի հիմնավոր միջնորդության հիման վրա Հանձնաժողովի նախագահի գրությամբ կամ Հանձնաժողովի որոշմամբ սահմանված տեղեկատվության ներկայացման ժամկետը համապատասխանաբար կարող է Հանձնաժողովի նախագահի գրությամբ կամ Հանձնաժողովի որոշմամբ երկարաձգվել, և տեղեկատվությունը ենթակա է տրամադրման այդ ժամկետում:

Ելնելով վերոգրյալից՝ Հանձնաժողովի նախագահի գրությամբ կամ Հանձնաժողովի որոշմամբ կամ օրենսդրությամբ սահմանված ժամկետի ավարտից հետո տեղեկատվության չտրամադրելը, այն ոչ հավաստի կամ ոչ ամբողջական տրամադրելը Հանձնաժողովին տեղեկատվություն տրամադրելու հարցում տնտեսավարող սուբյեկտների պարտականության խախտում է: Ավելին, նշված իրավախախտումը բնույթով ունի ձևական կազմ, և պահանջված տեղեկատվությունը

սահմանված ժամկետում չտրամադրելը, ոչ հավաստի կամ ոչ ամբողջական տրամադրելը արդեն իսկ բավարար է իրավախախտման փաստն արձանագրելու համար: Այսինքն, տեղեկատվությունը սահմանված ժամկետի խախտմամբ տրամադրելը, այն չտրամադրելուն ուղղված փաստարկներ ներկայացնելը չեն վերացնում խախտումը:

Միննույն ժամանակ, կարևոր է արձանագրել, որ օրենսդիրը սահմանել է իրավախախտման օբյեկտիվ կողմի ուղղակի դրսևորումներ, որոնցից են.

1. սահմանված ժամկետում տեղեկատվությունը չներկայացնելը,
2. ոչ հավաստի տեղեկատվություն ներկայացնելը,
3. ոչ ամբողջական տեղեկատվություն ներկայացնելը:

Ընդ որում, հարկ է նկատել, որ իրավախախտումն առկա է վերոգրյալ դեպքերից առնվազն մեկի առկայության դեպքում:

**Երրորդ հարցադրման կապակցությամբ.**

Հարկային օրենսգրքի (այսուհետ նաև՝ **Օրենսգիրք**) 390-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դրոշմապիտակներով դրոշմավորման ենթակա ապրանքներն են, ի թիվս այլնի, պանրի տեսակները և կաթնաշոռը (0406 ԱՏԳ ԱԱ ծածկագիր):

Օրենսգրքի 391-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝

1. Ակցիզային դրոշմանիշերով և (կամ) դրոշմապիտակներով դրոշմավորման (այսուհետ սույն գլխում՝ նաև դրոշմավորում) պարտավորություն են կրում ԵՏՄ անդամ չհամարվող պետություններից՝ «Բացթողում՝ ներքին սպառման համար» և «Անմաքս առևտուր» մաքսային ընթացակարգերով և ԵՏՄ անդամ պետություններից Հայաստանի Հանրապետություն դրոշմավորման ենթակա ապրանքներ ներմուծող և (կամ) Հայաստանի Հանրապետությունում դրոշմավորման ենթակա ապրանքներ արտադրող կազմակերպությունները և անհատ ձեռնարկատերերը, բացառությամբ սույն հոդվածով սահմանված դեպքերի:

2. Կազմակերպությունների (բացառությամբ մշտական հաստատություն չունեցող ոչ ռեզիդենտ կազմակերպությունների) կամ անհատ ձեռնարկատերերի պատվերով դրոշմավորման ենթակա ապրանքներն այլ հարկ վճարողների կողմից արտադրվելու կամ շալցվելու կամ այլ կերպ տարայավորվելու (փաթեթավորվելու) և պատվիրատուին վերադարձվելու դեպքում դրոշմավորման պարտավորությունը կրում է պատվիրատուն:

Օրենսգրքի 393-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Օրենսգրքի 389-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված ապրանքների դրոշմավորման համար նախատեսված ակցիզային դրոշմանիշերն ստացվում են մինչև այդ ապրանքների Հայաստանի Հանրապետություն ներմուծումը, իսկ Օրենսգրքի 390-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված ապրանքների դրոշմավորման համար նախատեսված դրոշմապիտակները՝ մինչև այդ ապրանքների օտարումը:

Օրենսգրքի 394-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ դրոշմավորման ենթակա ապրանքներ արտադրող կամ Օրենսգրքի 391-րդ հոդվածի 6-րդ մասում նշված հարկ վճարողները ապրանքների դրոշմավորումը կարող են իրականացնել ապրանքի արտադրության կամ օտարման նախապատրաստման ցանկացած փուլում՝ իրենց կողմից ընտրված տարածքում, բայց ոչ ուշ, քան մինչև այդ ապրանքների օտարումը:

Օրենսգրքի 394-րդ հոդվածի 9-րդ մասի համաձայն՝ արգելվում է ակցիզային դրոշմանիշերի և (կամ) դրոշմապիտակների օտարումը կամ փոխանցումը (տրամադրումը, հատկացումը) այլ հարկ վճարողների, բացառությամբ «Ժամանակավոր արտահանում» (ԵՏՄ անդամ պետությունների մասով՝ «մաքսային տարանցում») մաքսային ընթացակարգերով արտահանված ակցիզային դրոշմանիշերը և (կամ) դրոշմապիտակներն օտարերկրյա պայմանադիր կողմին փոխանցելու, Օրենսգրքի 391-րդ հոդվածի 2-րդ մասում նշված՝ պատվիրատուի կողմից դրոշմավորման ենթակա ապրանքներ արտադրող կամ շալցնող կամ այլ կերպ տարայավորող հարկ վճարողներին փոխանցելու, ինչպես նաև դրոշմավորման ծառայություն (գործողություն) մատուցող հարկ վճարողներին փոխանցելու դեպքերի:

Վերոնշյալ նորմերից հետևում է, որ տնտեսավարող սուբյեկտի կողմից, ի թիվս այլ ապրանքների, պանրի տեսակների և կաթնաշոռի (0406 ԱՏԳ ԱԱ ծածկագիր) դրոշմավորման համար նախատեսված դրոշմապիտակները ստացվում են մինչև այդ ապրանքների օտարումը, ինչպես նաև արգելվում է ակցիզային դրոշմանիշերի և (կամ) դրոշմապիտակների օտարումը կամ փոխանցումը (տրամադրումը, հատկացումը) այլ հարկ վճարողների, բացառությամբ «Ժամանակավոր արտահանում» (ԵՏՄ անդամ պետությունների մասով՝ «մաքսային տարանցում») մաքսային ընթացակարգերով արտահանված ակցիզային դրոշմանիշերը և (կամ) դրոշմապիտակներն օտարերկրյա պայմանադիր կողմին փոխանցելու, Օրենսգրքի 391-րդ հոդվածի 2-րդ մասում նշված՝ պատվիրատուի կողմից դրոշմավորման ենթակա ապրանքներ արտադրող կամ շալցնող կամ այլ կերպ տարայավորող հարկ վճարողներին փոխանցելու, ինչպես նաև դրոշմավորման ծառայություն (գործողություն) մատուցող հարկ վճարողներին փոխանցելու դեպքերի: Այսինքն, դրոշմավորման ենթակա ապրանքները դրոշմավորվում են բացառապես դրանք արտադրողի կամ ներմուծողի կողմից, կազմակերպությունների (բացառությամբ մշտական հաստատություն չունեցող ոչ ռեզիդենտ կազմակերպությունների) կամ անհատ ձեռնարկատերերի պատվերով դրոշմավորման ենթակա ապրանքներն այլ հարկ վճարողների կողմից արտադրվելու կամ շալցվելու կամ այլ կերպ տարայավորվելու (փաթեթավորվելու) և պատվիրատուին վերադարձվելու դեպքում ենթակա են դրոշմավորման պատվիրատուի կողմից՝ նրա դրոշմապիտակով, իսկ պարտադիր դրոշմավորման ենթակա ապրանքներն առանց դրոշմապիտակով դրոշմավորման կամ դրոշմապիտակները չեն կարող օտարվել կամ փոխանցվել (տրամադրվել, հատկացվել) այլ հարկ վճարողների:

**Չորրորդ հարցադրման կապակցությամբ.**

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 43-րդ հոդվածի համաձայն՝

1. Անձի և վարչական մարմնի փոխհարաբերություններում ապացուցման պարտականությունը կրում է՝

ա) անձը՝ նրա համար բարենպաստ փաստական հանգամանքների առկայության դեպքում.

բ) վարչական մարմինը՝ անձի համար ոչ բարենպաստ փաստական հանգամանքների առկայության դեպքում:

2. Եթե սույն հոդվածի 1-ին մասի «ա» կետով նախատեսված դեպքում վարչական մարմնի կողմից քննարկվող փաստական հանգամանքների վերաբերյալ տվյալներին (տեղեկություններին) անձը կարող է իրազեկ դառնալ բացառապես տվյալ վարչական մարմնի միջոցով, ապա ապացուցման պարտականությունը դրվում է այդ վարչական մարմնի վրա:

3. Եթե սույն հոդվածի 1-ին մասի «բ» կետով նախատեսված դեպքում վարչական մարմնի կողմից քննարկվող փաստական հանգամանքների վերաբերյալ տվյալներին (տեղեկություններին) վարչական մարմինը կարող է իրազեկ դառնալ բացառապես տվյալ անձի միջոցով, ապա ապացուցման պարտականությունը դրվում է այդ անձի վրա:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 28-րդ հոդվածի 1-2-րդ մասերի համաձայն՝

1. Կողմը պարտավոր է դատարանին ներկայացնել իր տիրապետման տակ կամ ազդեցության ոլորտում եղած այն բոլոր ապացույցները, որոնցով նա հիմնավորում է իր պահանջները կամ առարկությունները: Կողմն իրավունք չունի ներկայացնելու այնպիսի ապացույցներ, որոնք չեն ներկայացվել վարչական վարույթի ընթացքում, բացառությամբ այն դեպքերի, երբ կողմը չի ներկայացնում բավարար հիմնավորումներ այն մասին, որ օբյեկտիվորեն զրկված է եղել նշված ապացույցները վարչական վարույթի ընթացքում ներկայացնելու հնարավորությունից:

2. Վարչական մարմինը պարտավոր է նաև ներկայացնել վարչական վարույթի բոլոր նյութերը, ինչպես նաև իր տիրապետման տակ կամ ազդեցության ոլորտում եղած այն բոլոր ապացույցները, որոնք հիմնավորում են հակառակ կողմի պահանջները կամ առարկությունները, բացառությամբ այն ապացույցների, որոնց վարչական մարմինը կարող է իրազեկ դառնալ բացառապես հակառակ կողմի միջոցով, և որոնք հակառակ կողմը չի ներկայացրել վարչական վարույթի ընթացքում:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 124-րդ հոդվածի 2.1-րդ մասի համաձայն՝ վիճարկվող վարչական ակտի իրավաչափությունը որոշելիս վիճարկող կողմի՝ իր համար բարենպաստ հետևանքներ առաջացնող ապացույցների՝ վարչական վարույթի ընթացքում չտրամադրման հետևանքով առաջացած ոչ բարենպաստ հետևանքների ապացուցման բեռը չի կարող դրվել վարչական մարմնի վրա:

Վերոնշյալ նորմերից հետևում է, որ անձի համար բարենպաստ փաստական հանգամանքների առկայության ապացուցման պարտականությունը կրում է անձը: Ընդ որում, այն դեպքում, երբ անձի համար ոչ բարենպաստ փաստական հանգամանքները հերքող բարենպաստ փաստական հանգամանքների վերաբերյալ վարչական մարմինը կարող է իրազեկ դառնալ բացառապես տվյալ անձի միջոցով, ապա այդ փաստական հանգամանքների ապացուցման պարտականությունը դրվում է նրա վրա:

Միաժամանակ, հարկ է նկատել, որ վարչական մարմնի հետ փոխհարաբերություններում իր համար բարենպաստ փաստական հանգամանքների առկայության ապացուցման պարտականությունն անձը կարող է կատարել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասում թվարկված ապացույցներ ներկայացնելու միջոցով: Ընդ որում, այն դեպքում, երբ անձը վարչական վարույթի ընթացքում չի ներկայացում իր օգտին առկա

բարենպաստ փաստական հանգամանքների վերաբերյալ ապացույցներ, զրկվում է դրանք նույնիսկ դատական վարույթում ներկայացնելու հնարավորությունից՝ բացառությամբ այն դեպքի, երբ ներկայացնում է բավարար հիմնավորումներ այն մասին, որ օբյեկտիվորեն զրկված է եղել նշված ապացույցները վարչական վարույթի ընթացքում ներկայացնելու հնարավորությունից:

Օրենքի 62-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հանձնաժողովը վարչական վարույթն իրականացնում է Հանձնաժողովի գործունեության ընդհանուր կանոնների համաձայն՝ այն հատուկ կանոնների պահպանմամբ, որոնք սահմանված են սույն օրենքով, իսկ նույն հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ Հանձնաժողովի կողմից իրականացվող վարչական վարույթի համար սույն օրենքով առանձնահատկություններ սահմանված չլինելու դեպքում համապատասխան հարաբերությունների նկատմամբ կիրառելի են «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի դրույթները:

Նման պայմաններում ակնհայտ է, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքով նախատեսված բարենպաստ փաստական հանգամանքների ապացուցման պարտականության վերաբերյալ կարգավորումները հավասարապես կիրառելի են տնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտման վերաբերյալ վարույթով պատասխանողի առնչությամբ, քանի որ այդ կապակցությամբ Օրենքը առանձնահատկություններ չի սահմանել:

**Վերոշարադրյալ դիրքորոշումների կիրառումը սույն գործի փաստերի նկատմամբ.**

Գրությամբ Ընկերությունից պահանջվել է Հանձնաժողով ներկայացնել հետևյալ տեղեկատվությունը.

1) արդյո՞ք Ապրանքն արտադրվել է Ընկերության կողմից.

2) եթե այո, ապա ի՞նչ ապրանքատեսակ է այն՝ նշելով ամբողջական անվանումը, և երբևէ չէ՞լի այն արտադրվում:

Ընկերությունը 2023 թվականի ապրիլի 29-ին Հանձնաժողով ներկայացված գրությամբ, ի թիվս այլնի, հայտնել է, որ Ապրանքի անվանումը՝ «Կաթ պարունակող կաթնայուղի փոխարինիչով մթերք պատրաստված պանրի տեխնոլոգիայով Չանախ», որը արտադրվում է Ընկերության կողմից 2021 թվականի ապրիլի 8-ից, իսկ ԱԶ Ա. Հակոբյանի պատվերով փաթեթավորված ապրանքատեսակը՝ 2022 թվականի դեկտեմբերից:

Վերոգրյալի համատեքստում էական է պարզաբանել հետևյալ հարցադրումները.

**1) Արդյո՞ք Ընկերության համար ծագել է Գրության պահանջի հիման վրա համապատասխան տեղեկատվությունը տրամադրելու պարտականությունը:**

**2) Արդյո՞ք Ապրանքը հանդիսանում է «Կաթ պարունակող կաթնայուղի փոխարինիչով մթերք պատրաստված պանրի տեխնոլոգիայով Չանախ» անվանումով ապրանք:**

**Առաջին հարցադրման կապակցությամբ.**

Հանձնաժողովի կողմից տնտեսական մրցակցության պաշտպանության օրենսդրության պահպանման նկատմամբ վերահսկողություն իրականացնելու



շրջանակներում Հանձնաժողովի նախագահի 2023 թվականի ապրիլի 28-ի Գրությամբ Ընկերությունից պահանջվել է Գրությունը ստանալու օրվանից 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում Հանձնաժողով ներկայացնել տեղեկատվություն այն մասին, արդյո՞ք Ապրանքն արտադրվում է Ընկերության կողմից, եթե այո, ապա ինչ ապրանքատեսակ է այն նշելով ամբողջական անվանումը, և երբվանից է այն արտադրվում:

Վերոգրյալից պարզ է դառնում, որ Հանձնաժողովը պահպանել է Օրենքով նախատեսված կարգով տնտեսավարող սուբյեկտից տեղեկատվության պահանջի վավերապայմանները, մասնավորապես.

1. Գրությամբ պահանջված տեղեկատվությունը չի պարունակում բանկային, ապահովագրական, կենսաթոշակային և բժշկական գաղտնիք պարունակող տեղեկություններ:

2. Ապրանքի տեսակի պարզման հարցը պայմանավորված էր Հանձնաժողովի լիազորությունների իրականացման անհրաժեշտությամբ:

3. Ընկերությանը Ապրանքի տեսակի վերաբերյալ տեղեկատվության պահանջը ներկայացվել էր Հանձնաժողովի նախագահի Գրությամբ:

Նշվածի համատեքստում հարկ է արձանագրել, որ Հանձնաժողովի կողմից Ընկերությանը ներկայացվող տեղեկատվություն տրամադրելու պահանջի իրավաչափության պայմաններն առկա են եղել, այն է՝ պահանջվող տեղեկատվության անհրաժեշտությունը Հանձնաժողովի լիազորությունների իրականացման համար և Հանձնաժողովի նախագահի Գրությունը:

Միևնույն ժամանակ, Գրությամբ Ընկերությանը պարզաբանվել է սահմանված ժամկետում՝ 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում տեղեկատվությունը չներկայացնելու կամ ոչ հավաստի կամ ոչ ամբողջական տեղեկատվություն ներկայացնելու իրավական հետևանքների մասին:

Այսպիսով, Ընկերության համար ծագել է Գրության պահանջի հիման վրա տեղեկատվությունը տրամադրելու պարտականությունը:

**Երկրորդ հարցադրման կապակցությամբ.**

Սույն գործի փաստերի համաձայն.

1. Թիվ 4392 գրությամբ Ընկերությունից պահանջված 2022 թվականի հունվարի 1-ից մինչև 2023 թվականի մայիսի 22-ն ընկած ժամանակահատվածում Ընկերության կողմից արտադրված բոլոր պանիրների («Լոռի», «Չանախ» և այլն) և «Կաթ պարունակող մթերք պատրաստված կաթնայուղի փոխարինիչով արտադրված պանրի տեխնոլոգիայով» բոլոր ապրանքների պիտակների ցանկում բացակայում է Ապրանքի,

պիտակները:

2. Թիվ 4392 գրությամբ Ընկերությունից պահանջված 2022 թվականի հունվարի 1-ից մինչև 2023 թվականի մայիսի 22-ն ընկած ժամանակահատվածում Ընկերության կողմից արտադրված բոլոր պանիրների («Լոռի», «Չանախ» և այլն) և «Կաթ պարունակող մթերք պատրաստված կաթնայուղի փոխարինիչով արտադրված պանրի տեխնոլոգիայով» բոլոր ապրանքների փաթեթվածքների ցանկում բացակայում է Ապրանքի փաթեթվածքը:

3. Ընկերությունը հայտնել է, որ Ապրանքի փաթեթավորման պատվերը կատարելուց հետո, Ապրանքը ԱՁ Ա. Հակոբյանին մատակարարել է հաշիվ ապրանքագրերով՝ պատվիրատուին նախապես տրամադրելով Ապրանքի վրա փակցվող պիտակի մականշման օրինակը, մինչդեռ ԱՁ Ա. Հակոբյանի 2023 թվականի մայիսի 25-ին Հանձնաժողով ներկայացրած գրավոր բացատրության համաձայն՝ Ապրանքը Ընկերությունից ձեռք է բերել առանց մականշման և պիտակի:

4. Ընկերությունը հայտնել է, որ.

ա) թիվ 315-Ա որոշման հիման վրա իրականացված զննումից հետո Ընկերության ներկայացուցչի ներկայությամբ ունեցած քննարկումների ժամանակ ԱՁ Ա. Հակոբյանը հայտարարել է, որ Ընկերությունից ձեռք բերվածը «պանրային արտադրանք «Չանախ 50% յուղ.» ապրանք է, որի վրա սխալմամբ փակցրել է «Լոռի Excluzive» մականշումով պիտակը, իսկ դրոշմապիտակը փաթեթվածքի վրա փակցրել է իր աշխատակիցը:

բ) թիվ 315-Ա որոշման հիման վրա իրականացված զննումից հետո Հանձնաժողովի պատասխանատու ստորաբաժանման անդամների հետ տեղի ունեցած քննարկումների ժամանակ Ընկերության ներկայացուցչի կողմից պարզաբանվել է այն հնարավոր տարբերակները, որոնց առկայության պայմաններում հնարավոր է ԱՁ Ա. Հակոբյանի մոտ հայտնվելին Ընկերության «Լոռի» տեսակի պանրի համար նախատեսված դրոշմապիտակները:

Մինչդեռ Օրենսգրքի 394-րդ հոդվածի 9-րդ մասի համաձայն՝ արգելվում է ակցիզային դրոշմանիշերի և (կամ) դրոշմապիտակների օտարումը կամ փոխանցումը (տրամադրումը, հատկացումը) այլ հարկ վճարողներին: Ավելին, նշված դրոշմապիտակը նախատեսված է «Լոռի» տեսակի պանրի համար, այլ ոչ թե «պանրային արտադրանք «Չանախ 50% յուղ.» ապրանքի համար:

5. Ընկերությունը թիվ ՀԳ-02190/23 վարույթի առնչությամբ Հանձնաժողով ներկայացրած դիրքորոշմամբ հայտնել է, որ «Կալինինո» ապրանքը Ընկերության կողմից արտադրված «Կաթ պարունակող կաթնային յուղի փոխարինիչով մթերք պատրաստված Չանախ պանրի տեխնոլոգիայով» պատրաստված մթերք է, մինչդեռ Ընկերությունը 2023 թվականի հոկտեմբերի 20-ին և 26-ին Հանձնաժողով

ներկայացված գրություններով հայտնել է, որ Ընկերության կողմից արտադրվող կաթ պարունակող կաթնային յուղի փոխարինիչով պատրաստված պանրի տեխնոլոգիայով մթերքներն, այդ թվում՝ «Կալինինո» ապրանքն արտադրված չեն կոնկրետ տեսակի պանրի տեխնոլոգիայով:

Վերոգրյալի հիման վրա Հանձնաժողովն արձանագրում է, որ ընդհանուր առմամբ Ընկերության կողմից ներկայացված տեղեկությունների ամբողջականության և հավաստիության տեսանկյունից խնդրահարույց են:

Անդրադառնալով Ապրանքի «Կաթ պարունակող կաթնայուղի փոխարինիչով մթերք պատրաստված պանրի տեխնոլոգիայով Չանախ» հանդիսանալու վերաբերյալ տեղեկատվությանը Հանձնաժողովը փաստում է հետևյալը.

1. Ապրանքի փաթեթվածքի մակնշվածքում առկա դրոշմապիտակի համաձայն՝ Ապրանքն արտադրվել է Ընկերության կողմից որպես «Լոռի» պանիր:

2. Պանիր «Լոռի» և պանիր «Չանախ» ապրանքատեսակների համար հաստատված ազգային ստանդարտների (ՀՍ 378-2016 և ՀՍ 377-2016) նորմատիվ փաստաթղթերով ամրագրված ցուցանիշների և թիվ 1411 փորձարկման արձանագրությամբ արձանագրված Ապրանքի ձևի, չափի և զանգվածի համեմատության արդյունքում պարզ է դառնում, որ Ապրանքի լայնության և կերակրի աղի զանգվածային մասի վերաբերյալ ցուցանիշներն ավելի, իսկ երկարության, բարձրության, յուղի զանգվածային մասի, խոնավության զանգվածային մասի վերաբերյալ ցուցանիշներն համապատասխանում են պանիր «Լոռի» ապրանքատեսակի համար հաստատված ազգային ստանդարտի (ՀՍ 378-2016) նորմատիվ փաստաթղթերով ամրագրված ցուցանիշներին:

3. Ըստ ԱՁ Ա. Հակոբյանի գրավոր բացատրության՝ ԱՁ Ա. Հակոբյանի կողմից «Լոռի Excluzive» անվանումով Ապրանքի վրա փակցված պիտակները տարբերվում է միայն արտադրողի տվյալներով, այսինքն՝ Ապրանքը հանդիսանում է «Լոռի»:

4. Ապրանքը Ընկերության կողմից մատակարարվել է ԱՁ Ա. Հակոբյանին, իսկ վերջինիս կողմից «Պար-Արտ» ընկերությանը Ապրանքը մատակարարվել է որպես «Լոռի» տեսակի պանիր, ուստի այն իրացվել է համապատասխանաբար որպես «Լոռի» տեսակի պանիր:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Հանձնաժողովը գտնում է, որ Ապրանքը չի հանդիսանում «Կաթ պարունակող մթերք պատրաստված կաթնայուղի փոխարինիչով արտադրված պանրի տեխնոլոգիայով Չանախ», հետևաբար Ընկերության կողմից Ապրանքի տեսակի վերաբերյալ Հանձնաժողով ներկայացված տեղեկատվությունը ոչ հավաստի է: Ընդ որում, Ընկերության նման վարքագծի դրսևորումը վկայում է այն մասին, որ Ընկերության կողմից փորձ է արվել թաքցնել Ապրանքի որպես «Լոռի» անվանումով պանիր իրացված լինելու փաստը, քանի որ Ընկերության կողմից արտադրված բուսական յուղի առկայությամբ Ապրանքը որպես «Լոռի» պանիր իրացնելը կարող է հանգեցնել օրենսդրությամբ նախատեսված իրավական հետևանքի՝ պատասխանատվության միջոցի կիրառման: Ընդ որում, Հանձնաժողովի 2023 թվականի մայիսի 30-ի թիվ 254-Ա որոշմամբ հարուցվել է թիվ ՀԳ-02031/23 վարույթն այն հիմքով, որ ԱՁ Ա. Հակոբյանի կողմից «Պար-Արտ» ընկերությանն իրացված,

Ընկերության կողմից արտադրված Ապրանքը ոչ թե «Կաթ պարունակող կաթնայուղի փոխարինիչով մթերք պատրաստված պանրի տեխնոլոգիայով Չանախ» անվանումով ապրանք է, այլ «Լոռի» անվանումով պանիր (նշվածի մասին են վկայում «Պար-Արտ» ընկերության կողմից ներկայացված Ապրանքի ձեռքբերումը հիմնավորող փաստաթղթերի պատճենները), որը սակայն պարունակում է բուսական յուղ և չի համապատասխանում Կանոնակարգի պահանջներին և անկախ այն հանգամանքից, Ապրանքը հանդիսանում է «Կաթ պարունակող կաթնայուղի փոխարինիչով մթերք պատրաստված պանրի տեխնոլոգիայով Չանախ» արտադրանք, թե «Լոռի» անվանումով պանիր՝ դրա մակնշվածքում բացակայում է Ապրանքի անվանումը և «Պարունակում է բուսական յուղեր» տեղեկատվության նշումը: Ավելին, փաթեթվածքի վրա բացակայում է արտադրողի մասին տվյալները:

Շարադրվածի համատեքստում ուշադրության է արժանի նաև այն հանգամանքը,

Ինչ վերաբերում է Ընկերության այն պնդմանը, որի համաձայն՝ հարկային հաշվում «Չանախ 50% յուղ.» և «Լոռի 50 % յուղ.» անվանումներով ապրանքների իրացման փաստը ԱԶ Ա. Հակոբյանի կողմից հաստատվել է էլեկտրոնային ստորագրությամբ, այսինքն, տվյալ պահից ապրանքի սեփականության իրավունքը, ինչպես նաև հետագա ռիսկերը փոխանցվել է ԱԶ Ա. Հակոբյանին (համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 528-րդ հոդվածի՝ գնորդը պարտավոր է կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքների ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները), ապա Հանձնաժողովը նախևառաջ անհրաժեշտ է համարում բացահայտել «արտադրող» հասկացության և արտադրողի պատասխանատվությանն առնչվող օրենսդրության դրույթների բովանդակությունը:

Այսպես, «Սպառողների իրավունքների պաշտպանության մասին» օրենքի 1-ին հոդվածի համաձայն՝ (...) արտադրողն իրացման համար ապրանքներ արտադրող իրավաբանական անձը կամ անհատ ձեռնարկատերն է:

«Տեխնիկական կանոնակարգման մասին» օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի համաձայն՝ արտադրող է համարվում ցանկացած ֆիզիկական կամ իրավաբանական անձ, որը նախագծում և (կամ) արտադրում է որևէ արտադրանք կամ ունի նախագծված և (կամ) արտադրված արտադրանք՝ սեփական անվանմամբ կամ իր ապրանքային նշանի անվանմամբ շուկայահանման նպատակով:

«Տեխնիկական կանոնակարգման մասին» օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի համաձայն՝ արտադրանքի շուկայահանումը (շուկայում հասանելի դարձնելը)՝ գործողություն է, որն ուղղված է շուկայում նոր արտադրանքի առկայության ապահովմանը, նաև պահպանմանը՝ տարածման, արտադրանքի վճարովի կամ անհատույց փոխանցման նպատակով:

«Սպառողների իրավունքների պաշտպանության մասին» օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ արտադրողը (կատարողը, վաճառողը) պարտավոր է ժամանակին սպառողին տրամադրել ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) վերաբերյալ անհրաժեշտ և ստույգ տեղեկատվություն, որն ապահովում է դրանց ճիշտ ընտրության հնարավորությունը(...):

«Սպառողների իրավունքների պաշտպանության մասին» օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սպառողների իրավունքների խախտման համար վաճառողը (արտադրողը, կատարողը) կրում է օրենքով և (կամ) պայմանագրով նախատեսված պատասխանատվություն:

«Սպառողների իրավունքների պաշտպանության մասին» օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ապրանքի թերության հետևանքով պատճառված վնասը տուժողի ընտրությամբ ենթակա է հատուցման՝ վաճառողի կամ ապրանքն արտադրողի կողմից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1089-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ապրանքի թերությունների հետևանքով պատճառված վնասը տուժողի ընտրությամբ ենթակա է հատուցման վաճառողի կամ ապրանք արտադրողի կողմից:

Հիմք ընդունելով վերոգրյալ նորմերը՝ Հանձնաժողովն արձանագրում է, որ արտադրող է համարվում ցանկացած ֆիզիկական կամ իրավաբանական անձ, ով շուկայում տվյալ ապրանքի առկայության նպատակով իրականացնում է որևէ ապրանքի արտադրություն: Ապրանք արտադրողը (կատարողը, վաճառողը) պարտավոր է սպառողին տրամադրել ստույգ տեղեկատվություն, իսկ արտադրանքի հետ կապված ցանկացած թերության կամ տեղեկատվության հետ կապված խնդիրների համար կրում է պատասխանատվություն:

Վերոշարադրյալ կարգավորումների լույսի ներքո անդրադառնալով տվյալ գործին՝ ակնհայտ է, որ Ընկերությունը Ապրանքն արտադրողն է, Ապրանքն արտադրվել է իրացնելու նպատակով, հետևաբար Ապրանքի հետ կապված ցանկացած թերության կամ տեղեկատվության հետ կապված խնդիրների համար կրում է պատասխանատվություն անկախ այն հանգամանքից Ապրանքն անմիջապես թե միջնորդավորված տարբերակով է հասնում սպառողին:

Այլ կերպ ասած, մրցակցային իրավունքի համատեքստում էական չէ Ընկերությունը այլ տնտեսավարողի պատվերի հիման վրա, թե սեփական նախաձեռնությամբ է արտադրել օրենսդրական պահանջներին չհամապատասխանող ապրանք: Դրան զուգահեռ՝ Հանձնաժողովն արձանագրում է, որ նշվածը չի բացառում պատվիրատու և արտադրող կամ այլ քաղաքացիական հարաբերություններում պարտավորությունների խախտման կամ ոչ իրավաչափ այլ վարքագծի հետևանքով առաջացած վնասների հատուցման հարցերի քննարկումը պարտավորության կողմերի միջև:

Բացի այդ, անհիմն է Ընկերության այն համոզմունքը, որ Հանձնաժողովին հետաքրքրում է «Լոռի» և «Չանախ» ապրանքատեսակների փաթեթվածքները և պիտակները, ինչպես նաև այն պնդումը, որ Ընկերությունից չի պահանջվել արտադրվող ապրանքների կոնկրետ ցանկ, որը հնարավորություն կտար անվանացանկով ներկայացված ապրանքների վերաբերյալ տալ համապատասխան մեկնաբանություն, քանի որ Հանձնաժողովի կողմից Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված լիազորությունն իրականացնելու անհրաժեշտությամբ պայմանավորված թիվ 4392 գրությամբ Ընկերությունից պահանջվել է Հանձնաժողով ներկայացնել վերջինիս կողմից կոնկրետ ժամանակահատվածում՝ 2022 թվականի հունվարի 1-ից մինչև 2023 թվականի մայիսի 22-ն **արտադրված բոլոր** պանիրների («Լոռի», «Չանախ» և **այլն**) և **բոլոր** «Կաթ պարունակող մթերք պատրաստված կաթնայուղի փոխարինիչով արտադրված պանրի տեխնոլոգիայով» ապրանքների փաթեթվածքները և պիտակները կամ դրանց լուսանկարները:

Վերոգրյալի հաշվառմամբ թիվ 4392 գրության բովանդակությունից չէր կարող ենթադրվել, որ Հանձնաժողովին հետաքրքրում է միայն «Լոռի» և «Չանախ» ապրանքատեսակների փաթեթվածքները և պիտակները և դրանով չի պահանջվել կոնկրետ ապրանքների ցանկ: Ընդ որում, թիվ 4392 գրությամբ շեշտվել է, որ նույն ժամանակահատվածում արտադրված բոլոր պանիրների («Լոռի», «Չանախ» և այլն) և «Կաթ պարունակող մթերք պատրաստված կաթնայուղի փոխարինիչով արտադրված պանրի տեխնոլոգիայով» ապրանքների փաթեթվածքները և պիտակների փոփոխված լինելու դեպքում ներկայացնել նաև դրանք կամ դրանց լուսանկարները:

Ողջ վերոգրյալի հաշվառմամբ Հանձնաժողովն արձանագրում է, որ Ընկերության կողմից Հանձնաժողովի նախագահի 2023 թվականի ապրիլի 28-ի թիվ 3630 գրության պահանջի հիման վրա Ապրանքի վերաբերյալ «Կաթ պարունակող կաթնայուղի փոխարինիչով մթերք պատրաստված պանրի տեխնոլոգիայով Չանախ» տեղեկատվության տրամադրումն այն դեպքում, երբ Ապրանքն արտադրված չէ «Չանախ» տեսակի պանրի տեխնոլոգիայով, պարունակում է Հանձնաժողովին տեղեկատվություն տրամադրելու հարցում տնտեսավարող սուբյեկտի պարտականության խախտման հատկանիշներ, որի կապակցությամբ օրենսդրությամբ նախատեսված է իրավական հետևանք՝ պատասխանատվության միջոցի կիրառում:

**2) Ընկերության նկատմամբ պատրասխանավորության միջոց կիրառելու հարցի կապակցությամբ.**

Օրենքի 92-րդ հոդվածի համաձայն՝ տնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտման համար Հանձնաժողովն իրավասու է տնտեսավարող

սուբյեկտներին, պետական մարմիններին և դրանց պաշտոնատար անձանց տալու նախազգուշացում կամ նշանակելու տուգանք:

Օրենքի 93-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ տնտեսավարող սուբյեկտի կողմից Հանձնաժողովի նախագահի գրությամբ կամ Հանձնաժողովի որոշմամբ կամ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր կամ այլ տեղեկատվություն սահմանված ժամկետում չներկայացվելու կամ ոչ հավաստի կամ ոչ ամբողջական տեղեկություններ ներկայացվելու համար նշանակվող տուգանքի չափը կազմում է մինչև հինգ միլիոն դրամ:

Օրենքի 94-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պատասխանատվության միջոց կիրառելիս Հանձնաժողովը հաշվի է առնում տվյալ իրավախախտման բնույթը, տևողությունը, իրավախախտման հնարավոր կամ փաստացի ազդեցությունը շուկայում մրցակցային իրավիճակի կամ սպառողների շահերի վրա, տնտեսավարող սուբյեկտի կողմից տվյալ խախտման կրկնակիությունը, եթե նախորդ խախտման համար պատասխանատվության միջոց կիրառելու օրվանից չի անցել հինգ տարի, տնտեսավարող սուբյեկտի դիտավորության աստիճանը, տնտեսավարող սուբյեկտի կողմից իրավախախտում կատարվելու շարժառիթները և հանգամանքները, տնտեսավարող սուբյեկտի կողմից իրավախախտում կատարվելու փաստն ընդունելու կամ Հանձնաժողովի հետ համագործակցելու հանգամանքը, պատասխանատվությունից ազատելու հիմքերը, տնտեսավարող սուբյեկտի վրա նշանակվող տուգանքի հնարավոր ազդեցությունը, տվյալ տնտեսավարող սուբյեկտի գործունեության ոլորտը և տնտեսավարող սուբյեկտի պատմությունը:

Հանձնաժողովի 2021 թվականի դեկտեմբերի 28-ի «Պատասխանատվության միջոցի ընտրության և տուգանքի հաշվարկման մեթոդաբանությունը սահմանելու մասին» թիվ 395-Ն որոշմամբ (այսուհետ նաև՝ **թիվ 395-Ն որոշում**) սահմանված պատասխանատվության միջոցի ընտրության և տուգանքի հաշվարկման մեթոդաբանության (այսուհետ նաև՝ **Մեթոդաբանություն**) 9-րդ կետի համաձայն՝ տուգանքը հաշվարկում է հետևյալ բանաձևով.

$$S = F + F \times (\Theta - U)$$

Որտեղ՝

S-տուգանքի չափ,

F-տուգանքի բազային գումար,

Ծ-ծանրացնող բոլոր հանգամանքների համար սահմանված տոկոսների հանրագումար,

Մ-մեղմացնող բոլոր հանգամանքների համար սահմանված տոկոսների հանրագումարն:

**Բազային գումարի հաշվարկը.**

Մեթոդաբանության 27-րդ կետի համաձայն՝ չորրորդ խումբ իրավախախտումների դեպքում տուգանքի բազային գումարը Մեթոդաբանության 11-րդ կետի 4-րդ ենթակետի «ա», «բ», «գ», «դ» պարբերություններում նախատեսված իրավախախտումների համար հավասար է 2 000 000 ՀՀ դրամի, իսկ Մեթոդաբանության 11-րդ կետի 4-րդ ենթակետի

«ե» պարբերությամբ նախատեսված իրավախախտումների համար՝ 1 000 000 ՀՀ դրամի:

Մեթոդաբանության 11-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ չորրորդ խումբ իրավախախտումների դեպքում կիրառվող մեթոդը վերաբերում է հետևյալ իրավախախտումներին.

ա. համակենտրոնացման չհայտարարագրումը.

բ. տնտեսավարող սուբյեկտի կողմից Հանձնաժողովի նախագահի գրությամբ կամ Հանձնաժողովի որոշմամբ կամ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր կամ այլ տեղեկատվություն չներկայացնելը կամ ոչ հավաստի տեղեկություններ ներկայացնելը.

գ. տնտեսավարող սուբյեկտի կողմից Հանձնաժողովի լիազորությունների իրականացմանը կամ Հանձնաժողովի անդամի կամ աշխատակցի օրենսդրությամբ վերապահված իրավունքների կամ պարտականությունների կատարմանը խոչընդոտելը.

դ. Հանձնաժողովի որոշմամբ ամրագրված խախտումները սահմանված ժամկետում չդադարեցնելը կամ չշտկելը կամ որոշմամբ նախատեսված պայմանները, պարտավորությունները կամ հանձնարարությունները սահմանված ժամկետում չկատարելը.

ե. տնտեսավարող սուբյեկտի կողմից Հանձնաժողովի նախագահի գրությամբ կամ Հանձնաժողովի որոշմամբ կամ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր կամ այլ տեղեկատվություն սահմանված ժամկետից ուշ կամ ոչ ամբողջական տեղեկություններ ներկայացնելը:

Սույն գործով իրավախախտումը նախատեսված է Մեթոդաբանության 11-րդ կետի 4-րդ ենթակետի «բ» պարբերությամբ, հետևաբար տուգանքի բազային գումարը հավասար է 2 000 000 ՀՀ դրամի:

**Պատասխանատվությունը ծանրացնող և մեղմացնող հանգամանքներ.**

Մեթոդաբանության 43-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը դիտարկում ու վարչական ակտում արտացոլում է միայն այն ծանրացնող և մեղմացնող հանգամանքները, որոնք հաստատվել են համապատասխան վարույթի ընթացքում:

Մեթոդաբանության 44-րդ կետի համաձայն՝ մեղմացնող հանգամանքի առկայության ապացուցման բեռը կրում է վարույթով պատասխանողը:

Մեթոդաբանության 35-42-րդ կետերով սահմանված են չորրորդ խումբ իրավախախտումների դեպքում պատասխանատվությունը ծանրացնող և մեղմացնող հանգամանքները, ինչպես նաև սահմանված են բազային գումարից ծանրացնող և մեղմացնող հանգամանքների հաշվարկման դրույքաչափերը:

Սույն գործով Հանձնաժողովի կողմից որպես ծանրացնող և մեղմացնող որևէ հանգամանք չի հայտնաբերվել և չի հաստատվել:

Այսպիսով, ծանրացնող հանգամանքների համար սահմանված տոկոսների հանրագումարը կազմում է 0%, իսկ մեղմացնող հանգամանքներինը՝ 0%:

Միաժամանակ, Հանձնաժողովն արձանագրում է, որ Օրենքի 94-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված պատասխանատվության միջոց կիրառելիս Հանձնաժողովի կողմից գնահատման ենթակա այլ հանգամանքներ առկա չեն:

**Տուգանքի հաշվարկը.**



Վերոշարադրյալից հետևում է, որ տուգանքի չափը կազմում է 2 000 000 ՀՀ դրամ՝ համաձայն հետևյալ հաշվարկի.

$$S = P + P \times (\Sigma - U) = 2\,000\,000 + 2\,000\,000 \times (0\% - 0\%) = 2\,000\,000 \text{ ՀՀ դրամ:}$$

Այսինքն՝ Ընկերության նկատմամբ նշանակվող տուգանքի չափը կազմում է 2 000 000 (երկու միլիոն) ՀՀ դրամ:

### **3) Ընկերությանը հանձնարարություն տալու հարցի կապակցությամբ.**

Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը (...) սույն օրենքը խախտելու համար տնտեսավարող սուբյեկտներին, պետական մարմիններին և նրանց պաշտոնատար անձանց ենթարկում է պատասխանատվության՝ հանձնարարելով իր սահմանած ժամկետում շտկել խախտումը և հետագայում բացառել այն:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Վարույթի շրջանակում պարզվել է Ապրանքի տեսակի և անվանման վերաբերյալ հարցը՝ Հանձնաժողովը գտնում է, որ Ընկերությանը հանձնարարություն տալու անհրաժեշտությունը բացակայում է:

### **7. Եզրափակիչ մաս.**

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, 67-րդ հոդվածի 2-րդ մասով, 100-րդ հոդվածի 2-րդ մասով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 70-րդ, 71-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝ Հանձնաժողովը

## **Ո Ր Ո Շ Ե Ց**

1. «Իգիթ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի նախագահի 2023 թվականի ապրիլի 28-ի թիվ 3630 գրության պահանջի հիման վրա 2022 թվականի նոյեմբերի 9-ին արտադրված «Շիրակ» ապրանքային նշանով, «Լոռի Excluzive» անվանումով, 50% յուղայնությամբ ապրանքի վերաբերյալ «Կաթ պարունակող կաթնայուղի փոխարինիչով մթերք պատրաստված պանրի տեխնոլոգիայով Չանախ» տեղեկատվության տրամադրումն այն դեպքում, երբ տվյալ ապրանքն արտադրված չէ «Չանախ» տեսակի պանրի տեխնոլոգիայով, որակել որպես Մրցակցության պաշտպանության հանձնաժողովին տեղեկատվություն տրամադրելու հարցում տնտեսավարող սուբյեկտի պարտականության խախտում (այսուհետ՝ **Օրենքի խախտում**):

2. Օրենքի խախտման համար «Իգիթ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության նկատմամբ նշանակել 2 000 000 (երկու միլիոն) ՀՀ դրամի չափով տուգանք:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում դրա պատճենը «Իգիթ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը հանձնելուն հաջորդող օրվանից:

4. Սույն որոշման 2-րդ կետը դրանով նշանակված տուգանքը մինչև սույն որոշման անբողոքարկելի դառնալը չվճարվելու դեպքում ենթակա է հարկադիր կատարման՝ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքով սահմանված կարգով:

5. Սույն որոշումը կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

6. Սույն որոշման բողոքարկումը չի կասեցնում դրա գործողությունը կամ կատարումը:

**ՆԱԽԱԳԱՀ**

**Գ. ԳԵՎՈՐԳՅԱՆ**

2023 թ. նոյեմբերի 8  
Երևան